գուն 8 վերշոկ. իսկ միւսինը՝ 1 կանգուն 4 վերշոկ, առաջին  
տղան իւր փայտափ՝ գեանին վրայ 6 անգամ չափեց. իսկ  
երկրորդը՝ 4 անգամ: — Ո՞րքան տեղ մնաց դեռ չափելու:

696. «Առաջին մէջէն գեաւոյն խորութիւնը չափելու  
համար 6 ձողաչափ և 7 վերշոկ երկարութիւն ունեցող չուան  
մը թողուցին. բայց նաև յատակին չը հանելով՝ 8 կանգուն  
և 6 վերշոկ երկարութեամբ չուանի կտոր մը ևս նորա ծայրը  
աւելցուցին: — Ո՞րքան խորութիւն ունէր գեալ, եթէ այդ

րուր չուանէն նաւակին մէջ մնաց դեռ 1 ձողաչափ, 2 կան-  
գուն և 15 վերշոկ չուանի ծայր. իսկ նաւակին շրթանցը  
ջրէն ունեցած բարձրութիւնը 1 կանգուն և 10 վերշոկ էր:

697. Ունեկի մը երկարութիւնը 3 ձողաչափ և 10 վեր-  
շոկ է, լայնութիւնը 2 ձողաչափ, 2 կանգուն և 8 վերշոկ:  
— Ո՞րքան շրջանակ (բօրծօր) պէտք է գնել, որպէս զի սե-  
նեակը վերով ու վարով շրջապատուի:

698. Տղուն մէկը 4 կտոր չուան ունէր, ամեն մէկուն եր-  
կարութիւնը 2 ձողաչափ, 3 ոտնաչափ և 10 բթաչափ լի-  
նելով: իսկ մէկ տրիշ աղայ մը ևս 5 կտոր չուան ունէր,  
ամեն մէկը 1 ձողաչափ, 4 ոտնաչափ, և 6 բթաչափ երկա-  
րութիւն ունենալով: «Կոքա իւսարու կազեցին այս չուանի  
կտորները, և ստայուած երկարութեամբն արտը չափեցին: —  
Ո՞րքան երկարութիւն ունէր այդ արտը, եթէ չուանը 5 ան-  
գամ նորա վերայ տախածեցին, և յայանի է որ չուաններուն  
կապուած տեղերուն համար 2 ոտնաչափ չուան ի գործ  
դրուած էր:

699. Գործարանի մը մէջ գործաւոր մը օրը 2 ձողաչափ,  
5 ոտնաչափ և 10 բթաչափ կտաւ կը պատրաստէ. իսկ նորա  
կինը 2 ձողաչափ, 3 ոտնաչափ և 4 բթաչափ: — Ո՞րքան  
կտաւ նորա երկուքը 2 շարաթուայ մէջ կը գործեն, շարաթը  
6 օր միայն աշխատելով:

700. Տղայքը գետոյն վազուածքին (տեղենի) հակառակ  
նաւակով կը գնային, եթէ ջրին ընթացքը նաւակին յետ չը  
մղեր, այն ժամանակ նորա 1 վայրկեանի մէջ՝ 5 ձողաչափ, 1  
կանգուն և 4 վերշոկ կը յառաջանային. բայց վազուածքը  
մէկ վայրկեանին մէջ 2 ձողաչափ, 2 կանգուն և 10 վերշոկ կը  
յետաձգէր զանոնիք: — Ի՞նչքան յառաջ մղեցին նորա նաւա-  
կը 8 վայրկեանի մէջ:

701. Ապուածատիրոջ մը տունէն մինչեւ գետեվերը ու նեցած միջոյն էր 24 ձողաչափ և 2 կանգուն . իսկ գետելոյն միւս եզերքէն մինչև եկեղեցւոյ առաջը դանուած տարածութեան չափն և՝ 53 ձողաչափ և 2 կանգուն : — Ո՞րբան էր գետին լայնութիւնը, եթէ տունէն մինչև եկեղեցի հասնելու տարածութիւնն է 90 ձողաչափ և 2 կանգուն :

702. Քարաշարներ 72 ձողաչափ և 2 ոտնաչափ երկարութեամբ վաղոցմբ սալսատիցին (МОСТИТЬ): Ըսաշին շարաթը՝ ոոքա 8 ձողաչափ և 5 ոտնաչափ տարածութիւն բանեցան . երկրորդ շարաթը՝ 10 ձողաչափ և 3 ոտնաչափ . յաջորդ 3 շարաթը՝ 12-ական ձողաչափ և 6-ական ոտնաչափ . իսկ մնացեալ աեղը 1 շարաթէն տարածեցին : — Ո՞րբան տարածութեամբ աեղ քարայտուակեցին նոքա վերջի շարթուան մէջ :

703. Անտուկ մը կապելու համար 18 ձողաչափ, և 4 բժաշափ երկարութիւն ունեցող կտոր մը չուանէն, 5 ձողաչափ, 3 ոտնաչափ և 8 բժաշափ կտրեցին . իսկ մնացեալ չորս հաւասար մասերու կտրածեցին պայուսակներ (ՎԵՄՈԴԱՆԻ) ամբացներու համար : — Ո՞րբան երկարութիւն ունէր այս չուաններուն ամեն մէկ մասը :

704. Եօթը ձողաչափ և 6 բժաշափ երկարութեամբ երկրութելէն 2 կտոր կտրեցին . մէկը 2 ձողաչափ, 2 ոտնաչափ և 5 բժաշափ երկարութեամբ . միւսը 3 ձողաչափ, 5 ոտնաչափ և 4 բժաշափ . իսկ մնացեալ կտորէն մախաթներ (ՎՅԱՅԱԼԻՆԱ СПИЦЫ) շինեցին, ամեն մէկը 9-ական բժաշափ երկարութեամբ : — Քանի՞ այս տեսակ մախաթ շինուեցաւ :

705. Փողոց մը 43 ձողաչափ և 12 վերշոկ երկարութիւն ունի : Առկ քանի քարաշարներ 4 շարաթուան մէջ զայն քարայտակեցին, շարաթը 5-ական ձողաչափ, 1 կանգուն և 7 վերշոկ բանելով : Իսկ ուրիշ քանի մը գործաւորներ գործը

բոլորովին աւարտեցին, քարայտակելով՝ օրը՝ 2 ձողաչափ և 2 կանգուն : — Քանի՞ օրուան մէջ ամբողջ վաղոցը քարայտակուեցաւ :

706. Քամն ձողաչափ, 2 կանգուն և 2 վերշոկ երկարութեամբ կտոր մը չուանէն՝ օրօրոցներ շինելու համար 4 հաւասար կտորներ կտրեցին . իսկ մնացեալ 12 ձողաչափ, 2 կանգուն և 14 վերշոկ չուանէր՝ ճերմակեղէններ չորացնելու համար բակին մէջ կապեցին : — Ո՞րբան էր շրջոցի համար կարուած չուաններուն ամեն մէկ կտորին երկարութիւնը :

707. Գշանափորներ՝ (землекопъ) 8 օրուան մէջ՝ 12 ձողոչափ և 3 ոտնաչափ երկարութեամբ, և 9 ձողաչափ ու 2 կանգուն լայնութեամբ փոս մը փորեցին : — Կ՞նչքան երկարութեամբ փոս կը փորէին նոքա իւրաքանչեւր օրը :

708. Հիւսներ (плотникъ) 9 օրուան մէջ՝ 15 ձողաչափ, 2 կանգուն և 11 վերշոկ երկարութիւն . և 9 ձողաչափ, 2 կանգուն և 15 վերշոկ լայնութիւն ունեցող բակ մը պարսպով՝ պատեցին : — Ո՞րբան աեղ կաշխատէին նոքա իւրաքանչեւր օրը :

709. Աերմանացան մը 4 ածուներու մէջ հաղարջ (земляникъ) անկեց, որոց ամեն մէկը 10 ձողաչափ, 2 կանգուն երկարութիւն ունէր, և գեռ 9-ական ձողաչափոց և 2 կանգուննոց 5 ածուի մէջ ևս : — Ո՞րբան փող կառնու, եթէ ամեն մէկ ձողաչափի տարածութեան մէջէն՝ մէկ մանէթի արծողութեամբ հաղարջ հաւաքելու լինի :

710. Զրչորէ մը դոյլով ջուր կը քաշէին, որոյ ծայրը 29 ձողաչափ, 4 ոտնաչափ և 6 բժաշափ երկարութեամբ չուան մը կապուած էր : Ըս չուանին 5-դ մասը ջրհորին մէջ կը մտնէր, բայց երբ զայն վեր կը քաշէին, այն ժամանակ 2 ձողաչափ, 5 ոտնաչափ և 8 բժաշափ երկարութեան

միջոց մը թրծուած կանոնուէր : — Ա՞նչքան խորութիւն ունի  
ջրհորը մինչև ջրոյն հասնելու : այս պատճենը ։ Յաջորդուի ։

711. Քանի մը գործաւորներ՝ 9 օրու ան մէջ՝ 32 ձողաւ  
չափ խորութեամբ ջրհորը մը փորեցին : Առաջին օրը՝ նոքա 3  
ձողաչափ, 5 ոտնաչափ և 8 բժմաչափ խոր գնացին . յաջորդ 3  
օրու ան ամեն մէկուն մէջ ևս Յական ձողաչափ, Յական ոտնաչափ և Հական բժմաչափ : — Ո՞րքան փորեցին մնացեալ  
օրերուն ամեն մէկուն մէջ :

712. Տան մը նորոգութեան ժամանակ փորեցի երկարութեամբ՝ 35 ձողաչափ, 2 կանգուն և 14 վերշոկ տեղը սպալպապեցին . անցորդաց համար 5 տախտակ դրին, ամեն մէկը՝ 3  
ձողաչափ, 1 կանգուն և 6 վերշոկ երկարութեամբ : Պետա  
ամեն մէկը 2 ձողաչափ և 2 կանգուն երկարութեամբ քանի տախտակ դնել պէտք կը լինի :

713. Դերձակ մը ամբողջ կառոր չուխայէն 16 աղոց վերաբկու կարել կը կամենար, բայց հաշուեց տեսաւ, որ իրեն առաւել ձեռնատու . էր 10 հաս կրկնավերպկու շնութը : —  
Քանի կանգուն էր այդ կառոր չուխան, եթէ ամեն մէկ կը կենավիրարկուին մէկուկէս կանգունով առելի զնաց՝ քանի թէ  
մէկ վերաբկուի համար գնալուէն :

Ժ. Գ.

Օ ա ն ը ։ Ե ա ա ։ Է ա ։ Հ ա ։ Լ ա ։ Վ ա ։

Ա) ԲԱՆԱՏՈՒՄ ԽՆԻՔԻՔ.

714. Տասը լոտ և 2 զօլոտնիկ թէլլ 30 կոտ. կարժէ : —  
Ո՞րքան պիտի արժէ նոյն ասսակ թէլլին 1 ֆունթը :

715. Հաւասարակշուութեան համար քանի լոտ պէտք  
է զնել կշռոյն մէկ թաթին վրայ, եթէ միւս թաթին  
վրայ 96 զօլոտնիկ դրուած է :

716. Աշոյն մէկ թաթին վրայ հաւասար ծանրութեամբ  
2 գիրք դրին, դեռ 4 լոտ ևս . իսկ միւսին վրայ կէս ֆունթ  
և դեռ նորա մէկ 8 գրմասը, այն ատեն թաթերը հաւասար  
րակշուուցան : — Ո՞րքան կը կշռէ ամեն մէկ գիրքը :

717. Չորս հատ ոսկեղէն մատանի շնելու համար՝ ար-  
շեսաւորը երկու կտոր ոսկի հալեցուց : Կտորներէն մէկը՝  
3 լոտ և 2 զօլոտնիկ ծանրութիւն ունէր . իսկ միւսը՝ 1 լոտ  
և 2 զօլոտնիկ : — Ո՞րքան կը կշռէ ամեն մէկ մատանին :

718. Մէկ փութ շաքարէն՝ ամեն մէկ շաքաթը 5-ական  
ֆունթ և 6-ական լոտ կվատնուէր : — Ո՞րքան շաքար կը  
մնայ 4 շաքաթէն յետոյ :

719. Չիուն կը արուի օրը կէս փութ խոտ : Տասը օրէն  
վերջը՝ գնուած խոտէն՝ 2 փութ և 8 ֆունթ մնայ միայն : —  
Ո՞րքան էր գնուած խոտին քանակութիւնը :

720. Եթէ 1 ձողաչափ և 2 կանգուն երկարութեամբ  
հեռագրական երկաթաթելը՝ 1 ֆունթ և 8 լոտ կշռելու  
մնի . քանի կանգուն երկարութիւն պիտի ունենայ 10 ֆունթ  
կշռող երկաթաթելին կտորը :

721. Մէկ ձողաչափ և 2 կանգուն չուանը 1 ֆունթ և  
13 լոտ կը կշռէ : — Քանի կանգուն՝ այդ տեսակ չուանէն  
կարող է 3 ֆունթ և 3 լոտ կշռել :

722. Մէկ ֆունթ 1 լոտ և 1 զօլոտնիկ կշռող կտոր մը  
ոսկեղէն՝ քանի ակեղէն ապարանջան (браслетъ) կարելի է  
շնել, եթէ ամեն մէկը 1 լոտ և 1 զօլոտնիկ ծանրութիւն  
ունենալու լինի :

723. Երծաթագործ մը 21 լոտ ծանրութեամբ կտոր մը  
արծաթ ունէր, և կը ցանկար այդ արծաթէն մէկ երկոտա-

սանեակ դրգալ շինել այնպէս, որ ամեն մէկը 5 լոտ և 2  
զօլոտնիկ կշռէր: — Ի՞նչքան արծաթ դիւ պէտք կը լինի նրա  
ձեռք բերել:

724. Ո՞ւ վունթ և 1 լոտ ալիւրէն շաքարահայց ե-  
փուած է, ամեն մէկը 3 լոտ և 2 զօլոտնիկ ծանրութեամբ,  
և ամեն մէկը ծախտած է 2-ական կոտէկով: — Ո՞րքան փող  
սաացուեցաւ ամբողջ շաքարահայցերուն համար:

725. Գործարանի մը համար 2 վունթ շաքար գնուած  
է, յորմէ իւրաքանչիւր օր կը վանուի հական վունթ և  
10-ական զօլոտնիկ: — Ո՞րքան շաքար կինայ 8 օրէն յետոյ:

726. Տասնեմէկ լոտ և 2 զօլոտնիկ ոսկիէն քամի՞ սովա-  
րանջան կենէ, եթէ ամեն մէկուն 2 լոտ և 1 զօլոտնիկ ծան-  
րութիւն տրուի, և քանի՞ պիտի արժեն, եթէ ամեն մէկը  
15 մանէթ գնահատուի:

727. Ո՞ւ վունթ արծաթէն փոքրիկ դրգալներ շինուած  
է, ամեն մէկը 2 լոտ և 2 զօլոտնիկ ծանրութեամբ: — Ո՞րքան  
պիտի արժեն նոքա, եթէ ամեն մէկը 3 մանէթ գնահա-  
տուելու լինի:

728. Երեք տուփ թէյը կը կշռէ 6 վունթ և 27 լոտ:  
— Ո՞րքան պիտի կշռէ այս տեսակ 8 տուփ թէյը:

729. Ոսկերիչը հին արծաթ հալեցուց, այն է՝ 4 լոտ  
և 1 զօլոտնիկ ծանրութեամբ բաժակ մը, և 6 լոտ և 1 զօ-  
լոտնիկ ծանրութեամբ մոմսկալ մը, 1 պնակ՝ 5 լոտ և 2  
զօլոտնիկ ծանրութեամբ, և այս հալուած արծաթեայ տ-  
ռարկաներէն 7 դրգալ շինեց: — Ո՞րքան պէտք է կշռէ ա-  
մեն մէկ դրգալը:

730. Երկու զիրք միասին կը շռէն 3 վունթ: Երբ այս  
զիրեանքը կը տրին 2 թաթերուն վրայ զրին, այն ժամանակ տես-  
նուեցաւ որ հաւասարակշռութեան համար թեթև կողմին վրայ  
10 լոտ պէտք էր աւելցնել: — Ո՞րքան կը կշռէ ամեն մէկ գիրքը:

731. Երրորդ միասին կշռոյն մէկ թաթին վրայ  
նստան, միւս թաթին վրայ 4 փունթ գնել  
պէտք եղաւ, և այն ատեն թաթերը հաւասարակշռուեցան.  
բայց երբ զատ զատ թաթերու վրայ նստան, այն ատեն մէկ  
հատին մէջ 24 փունթ աւելցնել պէտք եղաւ: — Ի՞նչքան  
էր իւրաքանչեւր տղուն քաշը:

732. Ոսկերիչը կտոր մը ոսկի ունէր, յորմէ նախ և առաջ  
12 հատ փոքրիկ շղթաներ շինել կը կամենար, բայց յետոյ  
մասճեց և միայն 9 հատ շինեց: Եյս վերջէն շինած շղթայ-  
ները՝ առաջին շինելիքներէն 2 լոտ 1 զօլոտնիրով աւելի  
ծանր կշռեցին: — Ո՞րքան կշռեց այն ունեցած կտոր մը ոսկին:

733. Երկու վաճառական ապրանք փոխանակեցին: Ո՞ւ կը  
տուաւ 2 վունթ և 8 լոտ ծանրութեամբ արծաթեղէն ա-  
ռարկաներ, ամեն մէկ վունթը 32 մանէթ արժեցնելով.  
իսկ միւսը՝ նորա փոխարէն չուխայ, ամեն մէկ կանգունը 4-  
ական մանէթ գնահատելով: — Քամի՞ կանգուն չուխայ տալ  
կը պարտաւորի երկրորդը:

734. Երկու տղայը 4 վունթ կաղին ունէին. բայց երբ  
նոքա հաւասար թուով կերան և մնացեալը կշռեցին, այն  
ժամանակ տեսնուեցաւ որ մէկուն մօտ մնացէլ էր. 1 վունթ  
և 10 լոտ կաղին. իսկ միւսին մօտ՝ 1 վունթ 22 լոտ: —  
Ո՞րքան կաղին կար իւրաքանչեւրին քով:

735. Կառավարը ուղարկեցին՝ 2 վունթ 10 վունթ խոս  
գնել 90 կոտէկի. բայց նա բերաւ միայն 1 վունթ 20 վունթ  
և զձարեց՝ գնել կարծած գնէն՝ 10 կոտէկով աւելի: —  
Ո՞րքան մնացորդ բերաւ նա իրեն յանձնուած գումարէն:

736. Վարդուն մէկը արծաթաղործին 3 ոսկեղէն բա-  
ժակ տուաւ, ամեն մէկը 10 լոտ և 2 զօլոտնիկ ծանրութեամբ,  
և ինչիրեց որ այս ոսկեղէն գնդասել շինէ, ամեն մէկը 2 լոտ

Ճանրութեամբ, և մնացեալէն. աւգարանջան, ամեն մէկը Յական լօտ և 1 զօլոտնիկ ծանրութեամբ։ Երծաթագործը ո՞րբան ստացաւ իւրաշխատանայը համար, եթէ ամեն մէկ գնդասեղին համար Լական մանէթ ստացաւ, և ամեն մէկ ապարանջանին համար կս. Հական մանէթ։

ԲՐԱՅԱՆ ԳՈՅԵՑԱԳԱԴԻ ՊՐ

ՔՐԱՏՈՐ ԽՆԴԻՐՔ, ԱՅՀԵՑԱՅԻ ՀՅ

737. Տանրութէր մը՝ իւր գործաւորացը համար 2 պարկ ալիւր պաշեստի ունէր։ Երդանէ մէկուն մէջ 1 փութե 4 ֆունթ կար. իսկ միւսին մէջ 1 փութ 6 ֆունթ։ Ամեն մէկ 8 գործաւորնիրէն իւրաքանչիւրին համար օրը 1 ֆունթ և 2 լօտ ալիւր հարկ լինել հաշեւ եղած էր։ — Ո՞րբան ալիւր մնաց 4 օրէն յետո։

738. Կշռոյն մէկ թաթին վրայ 5 փութ, 10 ֆունթ և 8 լօտ ծանրութիւն դրուած էր. իսկ միւսին վրայ 3 անգամ Լական փութ, 20 ական ֆունթ և 10 ական լօտ դրուեցաւ։ — Ո՞րբան պէտք է աւելցնել թաթերուն մէկուն վրայ հաւասարակշռութեան համար։

739. Խոչարար մը 3 փարչ իւղ գնեց, մէկը 4 ֆունթ, 2 լօտ և 1 զօլոտնիկ ծանրութեամբ, միւսը 15 ֆունթ, 20 լօտ և 2 զօլոտնիկ, և երլորդը 24 ֆունթ, 15 լօտ ծանրութեամբ։ — Ո՞րբան կշռեց ամբոջը իւղը, եթէ բոլոր փարչերը 9-ու կէս փունթ կշռեցին։

740. Գեղջուշի մը՝ 3 դոյլ բալ (ՎԱՌԱ) վաճառանոց բերաւ, ամեն մէկը 18 ֆունթ, 10 լօտ և 2 զօլոտնիկ ծանրութեամբ. բայց ամեն մէկ պարապ դոյլը 6 ֆունթ 12 լօտ և 1 զօլոտնիկ կշռեց։ — Ո՞րբան էր զուտ բալին ծանրութիւնը։

741. Մրգավաճառանոցին մէջ 4 սնառուկ խաղող կար, ամեն մէկ 5 փութ, 12 ֆունթ և 8 լօտ ծանրութեամբ։ —

Ո՞րբան կը կշռէ զուտ խաղողը, եթէ ամեն մէկ պարապ սընչ տուկը 1 փութ, 5 ֆունթ և 16 լօտ կշռելու լինի։

742. Կէս երկոտասանեակ արծաթեայ դրդալ պատրաստելու համար, արշէստաւորը 1 ֆունթ, 16 լօտ և 2 զօլոտնիկ արծաթ, և 7 լօտ 1 զօլոտնիկ պղնինձ հալեցուց։ — Ո՞րբան պիտի կշռէ ամեն մէկ դրդալ։

743. Պղնձագործը 4 պղնձեայ աշտանակ հալեցուց. ամեն մէկը 1 ֆունթ, 9 լօտ և 2 զօլոտնիկ ծանրութեամբ, և այս հալուածէն շնից 5 լապաեր։ — Ո՞րբան պիտի կշռէ ամեն մէկ լապաերը։

744. Եօթը փութ և 27 ֆունթ խոտին վրայ դեռ ո՞րբան պէտք է յաւելուլ, որպէս զի երկու զցյդ ձիեր մէկ եօթնեակի մէջ կարողանան սնանիլ, եթէ յայտնի է որ մէկ ձին օրը 23 ֆունթ խոտ պիտի ուտէ։

745. Կշռոյն մէկ թաթին վրայ 5 մէծ պարկ ալիւր դրին, ամեն մէկը 3 փութ, 12 ֆունթ և 8 լօտ ծանրութեամբ, և 6 հատ ևս փոքր պարկ, ամեն մէկը մէծ պարկի բէն 1 փութուլ և 38 ֆունթով թեթև լինելու. իսկ միւս թաթին վրայ 30 փութ դրին։ — Երկրորդ թաթին մէջ դրուած ծանրութիւնը առաջնէն ո՞րբանով աւելի է։

746. Պղնձագործը 4 փութ, 10 ֆունթ պղնինձ ունէր։ Կա այս մետաղէն 6 կաթսայ շնից, ամեն մէկը 3 ֆունթ 12 լօտ և 2 զօլոտնիկ ծանրութեամբ, նոյնպէս և 8 փարչ, ամեն մէկը 2 փունթ և 12 լօտ ծանրութեամբ։ — Ո՞րբան պղնինձ մնաց դեռ այդ պղնձագործին մօտ։

747. Երուեստաւոր մը 4 ֆունթ և 30 լօտ ծանրութեամբ արծաթի կտոր մը ունէր։ Կա այս մետաղէն 3 զանգակ շնից, ամեն մէկը 12 լօտ և 2 զօլոտնիկ. նոյնպէս և 8 հատ փոքրիկ շղթանիր, ամեն մէկը 4 լօտ և 1 զօլոտ

նիկ ծանրութեամբ, իսկ մնացեալ արծաթէն՝ նա շինեց 4  
բաժակակալ (ուժտականութեամբ) : — Ո՞րքան կը կշռէ այս վիր-  
ջիններէն ամեն մէկը :

748. Տանտիկին մը 4 պարկ ալեւր գնեց, ամեն մէկուն  
մէջ 3 փութ և 15 ֆունթ ալեւր պարունակող, և սկսա-  
շարաթը 1 փութ, 10 ֆունթ և 10 լոտ ալեւր ի գործ  
դնել: Ինը շարաթ անցնելէն վերջու, նորս մօտ 2 չետվերիկ  
ալեւր մնաց: — Ո՞րքան կը կշռէ այդ տանտիկով գնած ա-  
լեւրին ամեն մէկ չետվերիկը :

749. Ասկերչին մէկը 3 արծաթեայ լապտեր հալեցուց,  
ամեն մէկը 3 ֆունթ, 12 լոտ ծանրութեամբ, նոյնպէս և 4  
տփսէ (ուժութեամբ), ամեն մէկը 2 ֆունթ և 15 լոտ ծանրու-  
թեամբ: — Քանի՞ 1 ֆունթ կշռող աշտանակ կելնէ այսքան  
արծաթէն:

750. Մէկը ունենալով 1 ֆունթ, 29 լոտ և 1 զօլոտ-  
նիկ արծաթ, արշեստառորին տուաւ, հրամայելով 8 բա-  
ժակակալ շինել, ամեն մէկը 5 լոտ և 2 զօլոտնիկ ծանրու-  
թեամբ: Իսկ մնացեալ արծաթէն՝ թէյի զրդաներ, ամեն  
մէկը 2 լոտ և 2 զօլոտնիկ ծանրութեամբ: — Քանի՞ դրդալ  
շինուեցաւ:

751. Վրշեստառորը 26 լոտ և 2 զօլոտնիկ ծանրութեամբ  
կտոր մը տակիէն 4 հատ քթախոտի տուփ շինեց, ամեն մէկը  
3 լոտ և 1 զօլոտնիկ ծանրութեամբ: Իսկ մնացեալ ոսկիէն՝  
մատանիներ, ամեն մէկը 1 լոտ և 2 զօլոտնիկ քաշով: —  
Քանի՞ կարող է ծախել նա բոլոր մատանիները, եթէ  
ամեն մէկուն համար 10 մանէթ արժողութիւն դրած է:

752. Չորս ֆունթ և 12 լոտ ծանրութիւն ունեցող  
կտոր մը արծաթէն թէյաման (զայնիկ) և շաքարաման շի-  
նեցին՝ երկուքն ալ համաշաւասար ծանրութեամբ, նոյնպէս

և 6 հատ թէյի դրդալ, ամեն մէկը 3 լոտ և 2 զօլոտնիկ  
ծանրութեամբ: — Նույնութիւն է թէյամանին քաշը:

753. Երկու հոգի 8 փութ, 19 ֆունթ, 17 լոտ և 2  
զօլոտնիկ ծանրութեամբ պղինձ ունէին. բայց երբ նորա զայն  
հաւասարապէս ծախեցին, այն ժամանակ մէկուն քովս մնաց  
2 փութ, 4 ֆունթ և 15 լոտ պղինձ. Իսկ միւսին քովս 1  
փութ, 30 ֆունթ, 24 լոտ և 2 զօլոտնիկ: — Ո՞րքան պղինձ  
ունէր այս երկու մարդոցմէ իւրաքանչիւրը, մինչև զայն  
ծախելուը:

754. Չորս արծաթեայ դրդալը, նոյնպէս և 4 բաժակը  
2 ֆունթ, 30 լոտ և 2 զօլոտնիկ կը կշռին: Եմեն մէկ բա-  
ժակակալ 2 լոտով և 1 զօլոտնիկով դրդալէն ծանր էր: — Ո՞րք-  
ան կը կշռէ բաժակը և դրդալը:

755. Երեք կիւզացի 15 փութ և 11 ֆունթ ալեւր  
ծախեցին համաշաւասար գնով: Կոյանէ մէկը իւր ալեւրին  
համար 6 մանէթ ստացաւ, միւսը 3, և երրորդը 4 մանէթ: —  
Ո՞րքան ալեւր ծախեց նոցանէ իւրաքանչիւրը:

756. Մէկ շաքաթուայ ընթացքին մէջ՝ 5 ձի կիրակրե-  
լու համար վաճանուած է 12 փութ և 10 ֆունթ խոտ: —  
Ո՞րքան խոտ տուած էին օրը մէկ ձիուն:

757. Աւմձը փութնոց վառելի իւրզով տակառ մը խա-  
նութ բերին: Եյս իւրզը 9 անօթներու մէջ պարպեցին.  
այն է, 5 հատին ամեն մէկուն մէջ՝ 18 ֆունթ և 12 լոտ  
լեցնելով, և մնացեալ 4 անօթից մէջ ևս՝ համաշաւասար  
քանակութեամբ լեցուցին: — Ո՞րքան իւր պարունակած եղաւ  
այս վերջի 4 անօթներէն ամեն մէկը:

Խառնոր օ Ա տօյ ՓԴ ։ Լարդը իւս ասա՞ օ Ա  
ԽՆԴԻՐՔ Ի ՎԵՐԱՑԹՈՒՈՑ ԱՌԱԿԵԼ ՔԱՆ չ100.

Ա) ԲԱՆԱՏՈՐ ԽՄԴԻՐՔ Ի ՎԵՐԱՑԹՈՒՈՑ 1-1000.] 857

մարդ աղաս զից բաց այս առաջար զամ է աղաս մասոց

758. Արգավաճառ մը 10 կողով սալրը ունել, ամեն մէկուն մէջ Յական տասնեակ գտնուելով։ Եռաջի օրուան մէջ նա 2 հարիւրեակ ծախեց, մէկական մանէթ հարիւրեակը իսկ միւս օրը մնացեալները, ամեն մէկ տասնեակը 1 գրիլէննիկի։ — Ի՞նչքան փող ստացաւ նա իւր ունեցած սոլրներէն։

759. Պարկի մը մէջ 28 տասնեակ վարունգ կար։ «Առցանե 100 հատը աղուած էր. իսկ մնացեալներէն օրը 1 տասնեակ ուտելու գործածուեցաւ։ — Քանի՞ օրուան մէջ կերտեցան մնացեալ վարունգները։

760. Գեղջուհւոյն մէկը 4 հարիւրեակ հաւկիթ վաճառանոց տորաւ։ Ճանապարհին Յ տասնեակը անզգուշութեան պատճառաւ. կոսրտեց. մնացեալ հաւկիթներուն մեծկակներէն 2 հարիւրեակ և 5 տասնեակը ծախեց, տասնեակը 20-ական կոպէկով. իսկ մնացեալ փոքրիկներուն 1 հարիւրեակը մէկ մանէթով տուաւ։ — Ո՞րքան փող ձեռք ձգեց նա։

761. Աերմանացանին մէկը՝ մէկ օրուան մէջ 8 հարիւրեակ վարունգ ծախեց, 1 տասնեակը 8 կոպէկի տալով։ — Ո՞րքան փող ստացաւ նա այս առուտուրէն։

762. Հարիւր չետվերիկ դարին 10 ձիոց համար քանի՞ օրուան կը բաւականանայ եթէ օրը ամեն մէկուն 1 գարնեց գարի արուելու լինի։

763. Երկու գրագիր զրութիւններ արտազրելու համար 8 մանէթով վարձուեցան։ «Եսցանէ մէկը 4 օր աշխատեցաւ. իսկ միւսը 6 օր։ — Ո՞րքան փող պէտք է ստանայ նոցանէ իւրաքանչիւրը՝ իւր աշխատանաց փոխարէն։

764. Պարտիզան մը 1,000 հատ խնձոր ծախեց, ամեն մէկ հարիւրեակը առանձին առանձին պարկերու մէջ դրած և ամեն մէկ պարկին համար 2 մանէթ ստացաւ։ — Քանի՞ ծախեց նա իւր բոլոր խնձորը, և քանի կարժէ նորա մէկ սպանեակը։

765. Տարը օրուան մէջ 1,000 վերատ տարածութեամբ տեղ մը կարելու համար, օրը քանի՞ վերատ յառաջանալ պէտք է։

766. Խաղալու համար երեխային տուին մէկ արկղ (յապիկ), լուած խորանարդածե գնատակներով (կցիկ), գերաններով (բրցէ) և փոքրիկ տախտակներով (լուպեչկա) (խորանարդեան արկղը 1,000 խորանարդածե գնատակներու կը հաւասարի)։ «Ա տնակ մը շնուց, 4 պատը և առաստաղը տոսխտակներէն բաղկացուց. յարկը (կրցկա) 16 գերաններով կազմեց. իսկ ծխնելուզին տեղ (ցրuba) 4 հատ խորանարդածե գնատակներ զրաւ։ — Քանի՞ հատ խորանարդածե գնատակներ մէջ ։

767. Արգավաճառ մը՝ հարիւրեակը Յ մանէթով՝ 5 հարիւրեակ խնձոր գնեց. իսկ ինքը՝ մէկ տասնեակը 50 կոպէկով ծախել սկսաւ։ — Ո՞րքան շահեցաւ նա, եթէ յայտնի է որ նոցանէ 4 տասնեակը վճացել էր։

768. Երկղի մը մէջ 276 հատ նարինջ կայ, որոց մէկ տասնեակը 60 կոպ. կարժէ։ — Ո՞րքան կարժէ բոլորը։

\*) Խորանարդեան արկղը, զոր կը գործածուի որպէս նկատողական յարմարաւորութիւն (բայլածու պօսօն) թուաբանական ուսման միջոցին, կը կայանայ. Ա) 100 հատ մասնական խորանարդածե գնատակներէ. Բ) 20 հատ գերաններէ, ունենալով խորանարդածե գնատակաց չետ համաշխատը հասուութիւն. իսկ երկարութեան կողմանէ 10 խորանարդածե գնատակաց երկարութեանը չափ. և Գ) 7 քառակուսի տափառկն երե, ունենալով խորանարդածե գնատակաց համաշխատը համեմատ համատութիւն. իսկ կողքը գերանին, երկարութեանը՝ համաշխատը բախփակ չափավով։ Գերանները տասնեակներու հաշուով կը ծառայեն. իսկ տախտակները հարիւրեակներու։ Ամեն մէկ գերանին մէջ 10 հատ խորանարդածե գնատակներ. իսկ տախտակներուն 100 խորանարդածե գնատակներ ի գործ կը դրուին։

769. Աերմանացանը իւր (ածուեներէն աշխահատ վարժունդ  
հաւաքեց, և նոյան հարիւրեակը 2 մանէթով ձախեց: — Ո՞լրիման ստացաւ նա բոլորին համար առ միջնորդ իւն առաջ:

770. Վաճառական մը իւր ունեցած 426 մատիոր՝ հատը  
Յ-ական կոպէկով ծախեց: — Ո՞րքան փող ձեռք ձգութ եղաւ  
նասայա առուտուրէն: 100.1 զ. մատիո զար:

771. Ծառայ մը՝ երկու անգամ խանութ ուղարկուեցաւ  
պտուղներ գնելու: Առաջին անգամը նա 10 տանձ և 20  
հատ ևս խնձոր գնեց, 1 մանէթ և 20 կոպ. վճարելով. իսկ  
երկրորդ անգամին նոյն տեսակէն 10 տանձ և 30 հատ ևս  
խնձոր, 1 մանէթ և 50 կոպ. հատուցանելով: — Ո՞րքան վճա-  
րած եղաւ նա ամեն մէկ տանձին (և խնձորին համար:

772. Մրգավաճառի մը խանութին մէջ պտուղներով  
լցուած 2 արկղ կար: Մէկն մէջ 1 հարիւրեակ խնձոր և  
500 տանձ, և արկղին վրայ զրուած էր, թէ այս բոլորը կար-  
մէ 23 մանէթ. իսկ մրւացն մէջ կար 1 հարիւրեակ խնձոր,  
և 400 տանձ, և արկղին վրայ զրուած էր, 19 մանէթի ար-  
ժողութիւն: — Քանի՞ կարժէ այս խնձորներուն և տանձներուն  
ամեն մէկ տասնեակը:

773. Մրգավաճառ մը 40 տասնեակ խնձոր ունէր, յորոց  
3 հարիւրեակը նա ծախեց, հարիւրը 90 կոպէկի. իսկ մնաց-  
նելուն 1 տասնեակը՝ 10 կոպէկով տուաւ: — Ո՞րքան փող  
ստացաւ նա ընդ ամենը:

774. Վաճառանոցէն 36 տասնեակ վարունդ գնուած է,  
յետոյ 3 պարկ ևս, ամեն մէկուն մէջ 15 ական տասնեակ վա-  
րունդ լինելով: Եյս վարունգները 9 հաւասարաչափ տակա-  
ռաց մէջ աղեցին: — Քանի՞ վարունդ պարունակեց ամեն մէկը:

775. Խանութ մը 5 հարիւրեակ տանձ բերուեցաւ, հա-  
րիւրեակը 4 մանէթ արժողութեամբ: Կոյսանէ 3 տասնեակը

խանութին մէջ փհացաւ. մեծկակներէն 2 հարիւրեակ և 4  
տասնեակը ծախուեցաւ, 60 ական կոպէկի տասնեակը իսկ  
մնացեալ մանրերը վերասին վաճառուեցաւ, տասնեակը 50 ական  
կոպէկով: — Ո՞րքան շահ ստացուեցաւ:

776. Երեք մանէթնոցը պէտք է այս եղանակաւ արծա-  
թեայ դրամոց վերածել, որպէս զի 20 հատ միատեսակ, և  
5 հատ ևս ուրիշ տեսակ դրամներ ստացուի: — Ի՞նչպիսի դր-  
ամներ կատացուի:

777. Երեք հատ 3 մանէթնոց ասսիզնացիները ի՞նչպիսի  
միատեսակ արծաթադրամներով և պղնձադրամներով կարելի է  
փոխանակել, և ո՞րքան այս տեսակ դրամներ կուտան:

778. Խանութ երթարով ես 10 մանէթ ունէի վրաս, և  
այն աեղ գնեցի 8 դիլք, ամեն մէկը 50 կոպ. արժողութեամբ:  
Եյս աեղ ինձ գրիվէննիկներով մնացորդ տուին: — Քանի՞  
դիլքնիկի ընդունած եղայ ես:

779. Ես քանի մը գիլք գնեցի, և վճարած ամեն մէկ  
մանէթէս մէկ մէկ տլուգրիվէննիկ ստացայ, ստացած մնացոր-  
դիս գումարն էր ընդ ամենը 80 կոպ.: — Ո՞րքան վճարած  
եղայ ես այդ գրեանցը համար:

780. Վատենագարանաց համար զրեեր գնուեցան: Գալ-  
զեական զրեանց համար վճարուած է այնքան զրիվէննիկները  
ինչքան որ գերմանականաց համար տրուած է այնքան  
թուով կոպէկները. իսկ ուստականաց համար, այնքան թուով  
մանէթ, որքան թուով որ գերմանական զրեանց համար պետ-  
տակներ արուած է: — Ո՞րքան վճարուած է բովանդակ զրեանց  
համար, եթէ յայտնի է որ գերմանական զրեանքն կարմեն  
2 մանէթ և 55 կոպէկ:

781. Ես 2 արկղներու մէջ արծաթեայ զրամներէ բաղ-  
կացեալ 6 մանէթի գումար մը հաւաքեցի: Եյս արկղներուն

մէկուն մէջ տվուգրիվէննիկներ կայք . իսկ միւսին մէջ նոյնքան թուով գրիվէննիկներ : — Քանի՞ մանէթ կայ ամեն մէկ արկղն մէջ :

782. Մարդուն մէկը աղքատաց Չ մանէթ փող բաժանեց : 14 հոգի մէկական գրիվէննիկ ստացան . իսկ մնացեալները մէկ մէկ պետալոիննիկ : — Քանի՞ էր ողորմութիւն ստացող անձանց թիւը :

783. 12 գործաւորներ իւրեանց աշխատութեանը փոխարէն 6 մանէթնոց ասիդնացիներ ստացան, զրոս չեավերտակներու փոխարկեցին : — Քանի՞ չետվերտակ բաժին կիյնայ իւրաքանչեւր գործաւորին :

784. Ամեն մէկ 12 առուց մէջ, տանտիկին մը բանջարելնաց համար խոչակերին 3 մանէթ և 60 կոպ. փող կուտայ : — Ո՞րքան փող տուած կը լինի նա 4 ամսուայ մէջ :

785. Երկու մարդ աղքատաց 3 մանէթ տուին : « Կոյանէ մէկը իւրաբանչեւրին մէկական պետակ տուաւ . իսկ միւսը դարձեալ իւրաբանչեւրին մէկական պետալոիննիկ : — Քանի՞ էր աղքատաց թիւը, և այս երկու մարդոցմէ իւրաբանչեւրը ո՞րքան փող տուած եղաւ նոցա :

786. Կմ երկու գրապանաց մէջ արծաթեայ դրամներէ բաղկացեալ 9 մանէթ փող կայ : Գրապանաց մեկուն մէջ ո՞րքան թուով որ պետակ կայ, միւսին մէջ ևս նոյնքան թուով չետվերտակ կայ : — Ո՞րքան փող կայ ամեն մէկ գրապանիս մէջ :

787. Գործարանի մը մէջ 5 գործաւորուչեաց իւրաբանչ չիւրին օրը 80-ական կոպ. կվճարուի . իսկ 5 գործաւորուչեաց իւրաբանչեւրին՝ 40-ական կոպէկ : — Քանի՞ մանէթ ստացած կը լինին բոլոր գործաւորներն ու գործաւորուչեները 30 օրուան մէջ :

788. 120 ձողաչափ երկարութիւն, և 60 ձողաչափ լայնութիւն ունեցող քառանկիւն դաշա մը իրամով շրջապա-

տել պէտք էր : — Կ՞ոչքան մեծութիւն պիտի ունենայ խրամին երկարութիւնը :

789. Երկու զանազան քաղաքներէ եկոլ երկու հոգի՝ Ճանապարհին իրարու պատահչեցան : « Կոյանէ մէկը » ժամը 6 վլրստ յառաջանալով՝ 20 ժամ քալած էր, իսկ միւսը՝ ժամը 5 վլրստ յառաջանալով՝ 30 ժամ Ճանապարհ արած էր : — Ո՞րքան էր նոցա Ճանապարհ ելած այս երկու քաղաքաց մէջ տեղի տարածութիւնը :

790. Երբ գաւազանով մը ձգախէժէ (резинէ) գնարակին զարկին, նա 120 ձողաչափ հեռաւորութեան միջոց մը անցաւ . գետին զարնուելով՝ նա դեռ 4 անգամով պակաս միջոց մը անցաւ, յետոյ 6 անգամ պակաս միջոց մը ևս կորեց, և դեռ առաջին ոստումէն 10 անգամ պակաս միջոց մը անցաւ, և ի վելջյ պատին զարնուեցաւ : — Կ՞ոչքան տարածութեամբ հեռու թուած եղաւ գնատիլ փայտին մէկ հարուածով :

791. Որդավաճառ մը 6 հարիւր նարինջ ունէր : « Կոյ նոցա մէկ մասը 12 կողովներու մէջ համաշաւասար թուով զրաւ . մնացեալ 120 հատը ուրիշ կողովներու մէջ զետեղեց, ամեն մէկուն մէջ մէկական տասնեակ գնելով : — Քանիկա՞ն նարինջ կեցած է այն 12 կողովոց ամեն մէկուն մէջ, և թէ մնացեալ նարինջները քանի՞ կողովներու մէջ զրուած են :

792. Երկաթ տեղափոխելու համար 20 ձի հարկաւոր է . եթէ ամեն մէկ ձիուն 40-ական փութ բեռնաւորելու լինինք : — Քանի՞ ձի պիտի գործածուի, եթէ ամեն մէկուն 50-ական փութ բեռնաւոր լինինք :

793. Ութը աղքատիկ լնտանեաց հաւասարապէս 480 մանէթի գումար մը բաժանել մասղիր եղած էին . բայց յետոյ տեսնուեցաւ որ դեռ երկու լնտանիք ևս օդնութեան կարսու են : — Կ՞ոչքան պէտք է մասն հանել այս վերջ երկու

ընտանեաց համար կու, այս 8 աղքատիկ ընտանեաց ամեն  
մէկուն ընկած բաժնէն, որպէս զի ամեն մէկ ընտանիքը հա-  
ւասարապէս ստանայ:

794. Իմ արկղներէս մէկուն մէջ 180 մանէթ կայ, իսկ  
միւսին մէջ աւելի: Բայց երբ ես Ելիլորդ արկղիս մէջ գեռ  
120 մանէթ դնելու լինիմ, այն ժամանակ նորա մէջ առաջին  
արկղին մէջ գտնուածէն երեք անգամ աւելի կը կընի: —  
Արքան փող կայ այժմ իմ երկու արկղներուս մէջ:

795. Երկու կառավար միասին արշաւեցին: Աէկուն ձին  
1 վայրկենի մէջ 80 ձողաչափ անցաւ, իսկ միասինը 3 վայրկենի  
մէջ 270 ձողաչափ տեղ կտրեց: — Կոցանէ ո՞ր կարող է ա-  
ռաջ անցնել, և ո՞քանով յառաջ՝ 8, 10 և 11 վայրկենի մէջ:

796. Ութը հարիւր կանգուն երկարութիւն ունեցող  
չուանին երես ծայրերէն քանի՞ անգամ կարելի է 30-ական  
կանգուն կարել, որպէս զի 80 կանգունոց կտօր մը մնայ:

797. Երեք տղայք միասին 600 կաղին ունէին. բայց երբ  
նոքա երեքն աւ հաւասար թուով կերան, այն ժամանակ մէ-  
կուն մօտ մնաց 120, միւսին 150, և երրորդին քովը 180  
կաղին: — Քանի՞ կաղին ունէր իւրաքանչեւր տղայն:

798. Քանի՞ անգամ ծանր են 200 հատ մէծ երկա-  
թագամելը 300 փոքր երկաթագամերէն, եթէ յայտնի է որ  
խոշոր երկաթագամերուն 1 փունթը 40 հատ կը պարունակէ  
իւր մէջը. իսկ փոքրերունը 60 հատ:

799. Խանութ մը 10 երկոտասանեակ զոյգ ձեռնոց բեր-  
վեցաւ, ընդ ամենը 100 մանէթ արժողութիւն ունենալով:  
Կոցանէ 70 զոյգը մէկ մէկ մանէթով ծախուած է: — Քա-  
նի՞վ պէտք է ծախել մնացեալ ձեռնոցներուն զոյգը, որպէս  
զի բոլոր ձեռնոցներէն 20 մանէթ շահ ստացուի:

800. Ութը աշակերտ մէկական ֆունթ կաղին գնեցին,  
ամեն մէկուն մէջ միջին թուով 125 հատ կար: Դալոց  
դալով, նոքա իւրեանց 9 ընկերաց իւրաքանչեւրին 40-ական  
հատ կաղին տուին: — Քանիկա՞ն հատ մնաց այն 8 աշ-  
կերաներէն իւրաքանչեւրին մօտ:

801. Երեք տղայք քանի մը ֆունթ կաղին գնեցին. բո-  
լորին թիւը 600 էր: Տղոցը մէկը այս առուտուրին համար  
տուաւ 30, միւսը 25, իսկ երրորդը 45 կոպ: — Ի՞նչ կերպիւ  
նոքա թող բաժանեն իրենց մէջ այս կաղինները:

802. Երկու խումբ գործաւորներ փողոցը քարայտակիցին,  
ամեն մէկ խմբին մէջ համաշաւսար թուով անձինք զրա-  
նուելով: Վռաջին խմբին իւրաքանչեւր գործաւորը՝ օրը 70  
կոպ. կստանար. իսկ երկորդը խմբինը 60: Եյս գործը 10 օ-  
րուան մէջ աւարտեցաւ, և հաշուի ժամանակ տեսան որ՝  
առաջին խումբը երկորդէն 8 մանէթով աւելի ստացել էր:  
— Քանի՞ էր գործաւորաց թիւը ամեն մէկ խմբին մէջ:

803. Շողենաւ մը և իւր թիւվարներով (գրեեպ)՝  
հանգերձ նաւակ մը, միւնոյն ժամանակուայ մէջ Պետերբուրգի  
Չուլածոյ կամրջին տակէն ճանապարհ ընկան: Եյս առաջինը՝  
մէկ վայրկենի մէջ՝ 40 ձողաչափ սկսաւ յառաջանալ, և 25  
վայրկենէն՝ նա արդէն Կիկօլյէվսկւոյ կամուրջին քովը հա-  
սաւ: Եյս միջոցիս նաւակը Կիկօլյէվսկւոյ կամուրջէն՝ մի-  
ւնոյն ժամանակուան մէջ՝ գեռ 400 ձողաչափով հեռի մնաց:  
— Քանի՞ ձողաչափով կը յառաջանար նաւակը մէկ վայրկենի մէջ:

804. Տեղէ մը առաւտօնեան ժամը 11-ին սուրհանգակը  
(կյուրեպ) ճանապարհ ելաւ, և սկսաւ ժամը 12 վերստ յա-  
ռաջանալ: Իսկ երեկոյեան ժամը 9-ին՝ նորա եակէն ժա-  
մանիւրու համար մէկ ուրիշ մը ուղարկուեցաւ, զոր 1 ժա-  
մանան մէջ՝ 15 վերստ կը յառաջանար: — Քանի՞ ժամէն

յիտոյ, և ի՞նչ ապրածութեան վրայ՝ երկրորդ սուրհանդակը ուղարկուած տեղէն առաջնոյն համեմել կը կարողանայ:

805. Շուն մը իւր կեցած տեղէն՝ 200 ոտնաշափ հեռաւորութիւն ունեցող տեղէ մը նապաստակին ետեւէն կը վաղեր: Այն ժամանակուան մէջ, երբ այս առաջնորդը 10 ոտնաշափ կը յառաջնար, երկրորդը 8 ոտնաշափ միայն յառաջ կը զիմեր: — Քանի՞ ոստում (սկաչեք) պիտի անէ այս առաջնորդին ետեւէն համեմելու համար, եթէ նորա ոստումը 2 ոտնաշափի հաւասար լինելը յայտնի է:

806. Խանութի մը մէջ երկու տեսակ կաղնններու աւելցուք մնացել էր: 12 ֆունթ այն տեսակէն, որոյ ամեն մէկ ֆունթը 20 կոպէկով կը ծախուէր, և 8 ֆունթ ևս 15-ական կոպէկնոցէն: Խանութպանը այս կաղնները իրարու խառնեց: — Քանի՞ պէտք է ծախս այս խառնուրդ կաղննին ֆունթը, որպէս զի՞ ո՞չ շահ ստացուի և ո՞չ վնաս:

807. Առաջի տարին՝ գիւղացին իւր արտերէն 40 պարկ հաճար հաւաքեց. ամեն մէկուն մէջ 2-ական չետվերտ լենելով: Խակ երկրորդ տարին՝ 70 պարկ, ամեն մէկ պարկը 3 չետվերիկ պարունակելով: — Ո՞ր տարուան մէջ նա աւելի ցան ձեռք ձգեց, և ի՞նչքանով:

808. Աշոյն մէկ թաթին վրայ՝ 110 ֆունթ դրուած էր, միւսին վրայ՝ 150: — Քանի՞ ֆունթ պէտք է աւելունել ամեն մէկ թաթին վրայ, որպէս զի թէ կշեռը համաշաւասրի, և թէ երկու թաթերուն վրայ ևս՝ 8-ական փութ ծանրութիւն գտնուի:

809. Երկու տղայք՝ արտին երկու հակադարձ կողմերէն՝ նորա երկարութիւնը չափեցին: «Նոցանէ մէկուն ձեռքը կար 5 ձողաչափ երկարութեամբ ժապաւէնի կտոր մը. խակ միւսինը նոյնպէս 12 կանգուն երկարութեամբ ժապաւէն մը: Երբոր

նոցանէ մէկը իւր թէելը 30 անգամ գետնին վրայ տարածեց, և երկրորդը 40 անգամ, այն ժամանակ նոցա մէջ 70 կանգուն տարածութեամբ միջոց մը մնաց: — Քանի՞ կանգուն էր այս չափուած արտին երկարութիւնը:

810. Պանախօնի մը համար 3 ֆունթ և 12 լոտ թէյ գնուած էր, զոր 5 շաբաթուան մէջ վասնուեցաւ, որով և իւրաքանչեւր տղու համար՝ մէկ շաբաթուան մէջ 3-ական զօլունիկ երթալը ալին յայտնի եղաւ: — Քանի՞ տղայ կար այս պանախօնին մէջ:

811. Երկու ձողաչափ շրջապատ ունեցող անիւ մը 3 մանրերորդին (սեկոնդի) մէջ 1 պայտ կանէ: — Ո՞րքան տարածութեան վրայ կարող է անցնիլ այդ անիւը 10 վայրկենի մէջ:

812. Գնուեցաւ գարի: Առաջին անգամ 2 չետվերտ երկրորդ անգամ 1 չետվերտ և 6 չետվերիկ. խակ երկրորդ անգամ 1 չետվերտ և 2 չետվերիկ: — Քանի՞ օրուան բաւականացաւ այդ գարին, եթէ օրը 1 չետվերիկ և 2 գարնեց ի գործ գրին:

813. Աւենալով 260 ֆունթ պղինձ, արհեստաւորը շոգեշարժ մէքենայի համար այնքան խողովակ շինեց՝ որքան որ 1 փութ և 30 ֆունթ ծանրութեամբ խողովակներ շինել կարելի եղաւ. խակ մնացեալ պղինձը՝ նա փութը 16-ական մանեթով ծախս: — Ո՞րքան փող ստացաւ նա մնացորդ պղինձին համար:

814. Իմ ժամացոյս մէկ ժամանակն մէջ 3 վայրկեան յետ կը մնար: Այսօր առաւօտեան ժամը 6-ին ես այս պահասը ճշգեցի: — Ո՞րքան ցոյց կուտան նոքա կէս օրին, 3 ժամ և 30 վայրկեանին, 6 ժամուան և 40 վայրկեանին:

815. Ես կէս օրուան ժամը 6-ին 40 վայրկեան անցած շջադայելու ելայ, և 1 վայրկենի մէջ 30 քայլ անելով՝

2 վերսա տեղ անցայ . իսկ իմ քայլիս երկարութիւնն էր  
1 կանգունի հաւասարաշափ : — Ճամը քանի՞ն տուն վերա-  
դարձայ ես :

**816.** Հեռազրական երկաթաթելը՝ 4 վերսա տարածու-  
թեան մը վրայ երկնցուած էր : — Քանի՞ սիւնակ դրած է  
այս տարածութեանը մէջ . եթէ մէկ սիւնակը միւսէն 20  
ձողաչափով հեռու անկուած է :

Բ) ԳՐԱԿՈՒՄ ԽՆԴԻՐԻ 2010 ԳՈՐԾՈՂՈԹԻԹԵԱՆՑ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐԻՆ ՎՐԱՅ  
ՀԱՆԴԻՐԵԶ ՄԵԺԱԳՈՒՄԱՐ ԹԻՒՆԵՐՈՎ .

ԳՈՒՄԱՐՈՒՄՆ .

**817.** Եպրանաց կնացքի 3 շոգեկառաց մէջ ալիւր բեռ-  
ցուած էր : Աէկուն մէջ 345 փութ , միւսին մէջ 498 , և  
երրորդին մէջ 518 փութ : — Քանի՞ փութ ալիւր ընդ ամենը  
բեռնաւորած էին :

**818.** Երկաթաշէն ճանապարհաց և կայարանաց շինու-  
թեանը համար 728 գեանափոր (землекопъ), 354 քարա-  
հատ , 128 դարրին , 157 հիւսն և 98 ջրկիր վարձուեցան :  
— Քանի՞ էր բովանդակ վարձկանաց թիւը :

**819.** Պատերազմի մը մէջ 5 դունդ զօրք իրարու հետ  
միացան : Կոռուէն յետոյ մէկ գունդէն 736 , միւսէն 925 , եր-  
րորդէն 637 , չորրորդէն 789 , և հինգերորդէն 589 մարդիկ  
կենդանի մնացին : — Քանի՞ եղաւ ողջ մնացող գինուորաց թիւը :

**820.** Մարդուն մէկը իւր ճանապարհորդութեանը մի-  
ջոցին 3,586 վերսա տեղ ձիով յառաջ գնաց . ջրային ճա-  
նապարհաւ 8,964 վերսա , և երկաթուղիով՝ 9,576 վերսա :  
— Քանի՞ վերսա տեղ անցած եղաւ նա ընդ ամենը :

**821.** Մարդուն մէկը 35,640 մանէթ արժողութեամբ տուն  
մը գնեց , և զայն ծախելով՝ 7,960 մանէթ շահ արած եղաւ :  
— Քանի՞վ ծախած եղաւ նա այդ տունը :

**822.** Հինգ վաճառական միասին առուտուր անելու ըս-  
կան : Կողանէ մէկը դրաւ 7,580 մանէթ . երկրորդը 14,890 ,  
երրորդը 24,560 , չորրորդը 23,540 և հինգերորդը 37,430  
մանէթ : — Քանի՞ մանէթէ բաղկացաւ նոցա դրամագլուխը  
առուտուրի համար :

**823.** Առաջի տարին՝ երկաթուղին 36,829 մանէթ զուտ  
շահ բերաւ . երկրորդ տարին՝ 54,367 , երրորդ տարին՝ 82,754  
և չորրորդ տարին՝ 127,586 մանէթ : — Ո՞րքան զուտ շահ  
ստացուեցաւ այս 4 տարուան մէջ :

**824.** Պետերբուրգի կուսակալութեան (ցինցիա) մէջ 8  
գաւառ (յէնձը) կայ , որոց մէջի բնակիչները 1872 թուին  
համբուեցան : Պետերբուրգի նահանգին մէջ՝ 599,418 հոգի .  
Կտորվակւոյ մէջ՝ 100,586 , Լուժակւոյ մէջ՝ 80,817 , Կովու-  
գօժակւոյ մէջ՝ 77,454 հոգի . Պետերբուրգի մէջ՝ 57,894  
հոգի . Յարսկուէլակւոյ մէջ՝ 103,068 հոգի . Եկատերինուրակւոյ  
մէջ՝ 38,560 հոգի . Համբուրգսկուոյ մէջ՝ 57,978 հոգի , և գեռ  
Կրօնշտատի մէջ՝ 45,155 հոգի : — Քանի՞ բնակիչ համբու-  
ցաւ ընդ ամենը , յիշեալ թուականին՝ Պետերբուրգի կու-  
սակալութեանը մէջ :

**825.** Ռուն Եւրոպեան Առուսասատի մէջ 65 միլիոն 500  
հազար բնակիչ կը հաշուի : Գինեանախայի մէջ՝ 2 միլիոն  
500 հազար բնակիչ . Պրիվիլիէնսկեան կողմերը՝ 5 միլիոն .  
Սիբիրիայի մէջ՝ 4 միլիոն 500 հազար , և Կովկասեան նա-  
հանգաց մէջ՝ 3 միլիոն 500 հազար բնակիչ : — Ո՞րքան բնա-  
կիչ կայ բովանդակ Առուսական կայսերութեան մէջ :

**826.** Օդեսսայէն մինչև Մոսկով երթալու ճանապարհին  
հեռաւորութիւնն է , 1,362 վերսա . իսկ Մոսկովին մինչև Պե-

տերբուրդ երթալու տարածութիւնն է, 604 վերսու: — Քանի՞  
վերսու արտա ճանապարհորդը՝ Օդեսայէն Մոսկովի վրայով  
գիտելուրդ երթալով՝ և այն տեղէն վերսախն յիտ գառ-  
նալով:

827. Կալուածատէր մը իւր արտերէն 32,568 փութ-  
իսու հաւաքեց: Իսկ ուրիշ կալուածատէր մը ևս՝ 9,564  
փութով առաջնէն աւելի: — Ինչ քանակութեամբ իսու  
հաւաքած եղան այս երկու կալուածատէրերը:

828. Հօր մը մաշուանէն յետոյ՝ նորա երկու որդիքն ու  
մէկ դուստրը՝ նորա ժառանգութիւնը իրենց մէջը բաժանեցին:  
Ուրդւոց մէկը ստացաւ 7,560 մանէթ, միւսը 6,470. իսկ աղ-  
ջիկը իւր երկու եղբարցը միասին ստացածներուն քանակու-  
թեանը չափ ստացու: — Ո՞րքան էր նոցա ձեռք բերած ժա-  
ռանգութեան մեծութիւնը:

829. Կալուածատէր մը երեք տեղ հող ունի: Մէկուն  
վրայ 2,348 արտավար, միւսին վրայ՝ առաջնէն 456 արտա-  
վարով աւելի, երրորդին վրայ՝ առաջնին երկու տեղերէն 938  
արտավարով աւելի: — Քանի՞ արտավար էր կալուածատիրոջ  
ունեցած ամբողջ հողը:

830. Շաբարի գործարան մը՝ առաջի տարին 23,648  
մանէթ շահ ցոյց տուաւ. իսկ յաջորդ տարիներուն ամեն  
մէկուն մէջ՝ առաջնին տարուանէն 4,578 մանէթով աւելի շահ  
ցոյց տալ սկսաւ: — Ո՞րքան շահ պիտի ստացուի Յոդ տարին  
լրանալէն յետոյ:

831. Չորս շոգենաւ գարի արտասահման (զարանից) ու-  
ղարկուեցաւ: Մէկուն մէջ 5,846 չետվերտ գարի բեռնուած  
էր. միւսին մէջ՝ առաջնոյն մէջ լցուածէն 356 չետվերտով  
աւելի. երրորդին մէջ՝ առաջնին երկու շոգենաւաց մէջ լցուած  
գարիին քանակութեամբն. իսկ չորրորդին մէջ՝ երկրորդ շոգե-

նաւին մէջ լցուածէն 748 չետվերտով աւելի: — Ո՞րքան գարի  
ուղարկուած եղաւ այս չորս շոգենաւներով:

832. Մարդուն մէկը իւր կալուածը (սմէնի) 56,780  
մանէթի ծախեց. իսկ միւս կալուածը՝ առաջինէն 3 անգամ  
նոյնքան գումարով ծախեց. նոյնպէս քաղաքին մէջ ունեցած  
տունը 18,960 մանէթով ծախեց. իսկ իւր չուխայի գործա-  
րանը՝ տանը զինէն 2 անգամով աւելի ծախեց: — Քանի՞վ  
վաճառած եղաւ նա իւր բովանդակ կալուածը:

Հանունք կամ Բարձրունք.

833. Քաղաքի մը երկու գիմազիաներուն մէջ 936 ա-  
շակերտ կար: Այն է, մէկուն մէջ՝ 428 աշակերտ, իսկ միւ-  
սին մէջ՝ մնացեալները: — Ո՞րքան էր միւս գիմազիային մէջ  
գտնուող աշակերտաց թիւը:

834. Կուրսկայէն մինչև Մոսկով 489 վերստ ճանապարհի  
տարածութիւն կայ. իսկ մինչև Պետերբուրդ 1,093 վերսու:  
Ճանապարհորդ մը Կուրսկայէն Պետերբուրդ երթալու ճանա-  
պարհ ելաւ՝ և քիչ մը ժամանակ Մոսկովի մէջ կեցաւ: —  
Քանի՞ վերստ գեռ մնաց նորա՝ մինչև Պետերբուրդ հասնելու  
համար:

835. Լճի մը խորութիւնը չափելու համար՝ 1,257 ձո-  
ղաչափ երկարութեամբ չուան մը առին: Երբ նորա ծայրին  
ծանրութիւն մը կապելով՝ շոգենաւէն լջին մէջ թողուցին,  
այն ժամանակ շոգենաւին մէջ՝ 439 ձողաչափ երկարութեամբ  
չուան մնաց: — Ո՞րքան էր այդ չափուած տեղը լջին խո-  
րութիւնը:

836. Տան մը շինութեանը համար 150 հազար աղեւս բերուած էր. բայց շէնքին համար միայն 128,596 հատը բաւական եղաւ: — Վանի՛ աղիւս անդործադրելի մնաց:

837. Մարդուն մէկը 72,640 մանէթով 2 տուն գնեց: Կողանէ մէկուն համար 23,560 մանէթ վճարեց: — Ոլքան պիտի վճարէ միւսին համար:

838. Պետերուրդի կուսակալութեան մէջ 1872 թուականին 1,160,930 բնակիչ կը համրուէր. իսկ Մոսկովի կուսակալութեան մէջ՝ 1,678,784 բնակիչ: — Այս երկու կուսակալութեանց որուն մէջ առելք բնակիչ կայ, և ոլքանով:

839. Վառօգարան մը (пороховой заводъ) մէկ տուայ շրջանին մէջ 82,564 ֆունթ վառօդ պատրաստած էր. իսկ ուրիշ գործարան մը ևս՝ նոյնքան ժամանակուան մէջ՝ 115,623 ֆունթ: — Վանի՛ ֆունթով առելի պատրաստած էր երկրորդ գործարանը առաջինին:

840. Տվերսկիեան կուսակալութեան մէջ 1872 թուին՝ 1,521,577 բնակիչ կը համրուէր: Կողանէ 1,395,935 հողի գաւառաց մէջ կը բնակիէր: — Վանի՛ էր քաղաքաց մէջ բնակող անձանց թիւը:

841. Առշանդակը 4 օրուան մէջ 1,100 վերստ անցաւ: Այն է՝ առաջին օրը՝ 256 վերստ, երկրորդ օրը՝ 283, երրորդ օրը՝ 272 վերստ: — Վանի՛ վերստ տեղ կարեց նա չորրորդ օրը:

842. Զորս հարիւր ութունևէինք ձողաչափ երկարութեամբ փողոց մը 4 ամսուայ մէջ քարայառակեցին: Առաջին ամիսը՝ 126 ձողաչափ տարածութեամբ տեղ, երկրորդ ամիսը՝ 97, երրորդ ամիսը՝ 135. իսկ չորրորդ ամիսը՝ փողոցին մնացիւալ մասը: — Վանի՛ ձողաչափ երկարութիւնը ունէր այս վերջի ամսուան մէջ քարայառակուած մասը:

843. Մարդուն մէկը 3 պարտատեարց 82,546 մանէթ տալիք է: Կողանէ մէկուն՝ 9,645 մանէթ, միւսին 27,966. իսկ մնացեալ պարտքը երրորդին: — Ի՞նչքան պարտական է նա երրորդ պարտատիրոջը:

844. Վաճառական մը իւր 58,600 մանէթի դրամագլուխ (капиталъ) սկսաւ առուտուր անել: Կռաջին տարին՝ նա 2,375 մանէթ շահ ստացաւ. երկրորդ տարին՝ 3,647 մանէթ վնաս կրեց. երրորդ տարին՝ 1,258 մանէթ գարձնաւ շահ ստացաւ, և չորրորդ տարին՝ 4,567 մանէթ վերատին վաս տեսաւ: — Ոլքանի՛ հասած է այժմ նորա դրամագլոււիր:

845. Երրորդիոյ տարածութիւնն է 180 հազար քառակուսի մղոն: Ասիան ունի՝ 880 հազար քառակուսի մղոն. Եվրիկէն՝ 545 քառ. մղոն. Եմերիկան՝ 672 հազար քառ. մղոն. և Եստրալիան՝ 160 հազար քառ. մղոն: — Իսկ երկրագնդիս բովանդակ տարածութիւնն է՝ 9 միլիոն 250 հազար քառ. մղոն: — Վանի՛ քառակուսի մղոն տեղ բունած են Ովկիանոսները:

846. Խերսոնի կուսակալութեան մէջ՝ 1872 թուին՝ 1,497,995 բնակիչ կհամրուէր: Կողանէ մէկ գաւառին մէջ՝ 279,408 հոգի էին, միւս գաւառին մէջ՝ 136,359 մարդ, երրորդին՝ 353,312 մարդ, չորրորդին՝ մէջ՝ 257,666 հոգի, հինգերրորդին՝ մէջ՝ 134,805. իսկ մնացեալ բնակիչները՝ Խերսոնեան գաւառին մէջ կը գտնուէին: — Վանի՛ էր այս վերջի գաւառին մէջ բնակող անձանց թիւը:

847. Կաւակով մը 426 ձողաչափ փայտ բերուած էր. մէկ ուրիշով մը՝ 38 ձողաչափով առելի, և երրորդով մը 69 ձողաչափով երկրորդէն պակաս: Այս 3 նաւակներուն մէջէն 897 ձողաչափ փայտ ծախտեցաւ: — Ոլքան փայտ մնաց դեռ այս 3 նաւակաց մէջ:

**848.** Հօրը մահուանէն յետոյ՝ նորա որդւոյն ու Զ գստերացը  
56,420 մանէթ ժառանգութիւն մնաց : «Եղանէ մէկն ստա-  
ցաւ 10,840 մանէթ, միւսը 12,560, երրորդը՝ 3,849 մանէ-  
թով երկրորդէն պակաս : Եղջանց մէկն ստացաւ 8,570 մա-  
նէթ, իսկ նորանէ փոքրը՝ մնացեալ փողը :—Ո՞րքան ստացաւ  
փոքր դուստրը :

**849.** Կապալառուխն (подрядчикъ) մէկը Յ երկաթուղի  
շխնեց, և բոլորին համար 16,578,342 մանէթ ստացաւ: Ո՞էկի  
ձանապարհն համար՝ 8,274,375 մանէթ ընդունեցաւ. երկ-  
րորդին համար՝ 2,896,587 մանէթով պակաս, և մնացեալ  
փողն ալ՝ երրորդին համար: — Ո՞յքան ստացաւ նա վերջին  
ձանապարհին համար: /

¶ ۷۰

850. Վաղաբի մը 8 փողոցը իւղ վառելով կը լուսաւորէին, և ամեն մէկ փողոցին համար՝ գիշերը 136 ֆունդի իւղ կը վառուէր: Ո՞ւրքան իւղ կը վառուի այս բոլոր փողոցներուն վրայ մէկ գիշերուան մէջ:

851. Երկաթուղե մը՝ ամիսը 82,564 մանեթ շահ կը  
բերէր : — Ո՞քան շահ կարող է բերել նա 9 ամսուան մէջ :

852. Ըստենաւը 24 ժամուան մէջ 289 վերսա կանցնի .  
իսկ երկաթուղարքն գնացքը 567 վերսա : — Վանի՞ վերսաով  
աւելի կարող է երկաթուղին շոգենաւէն յառաջ անցնիլ մէկ  
շաբաթուան մէջ :

853. Արդուն մէկը ամիսը 138 մանէթ 60 կոպ. ոռձիկ  
ստանալով՝ ամսական 89 մանէթ և 45 կոպ. կը վատնէր : —  
Ո՞րքան փող կարող է նա աւելացնել 6 ամսուան մէջ :

854. Կալուածատէր մը՝ իւր 8 արտավար տեղէն ամեն  
մէկէն 145.ական փութ խոտ հաւաքեց . իսկ իւր ուրիշ 9  
արտավար տեղէն ամեն մէկէն՝ 137.ական փութ : — Ո՞րքան  
խոտ հաւաքած եղաւ այդ կալուածատէր :

855. Եղիւսի գործարան մը 1 օրուան մէջ 3,865 հատ  
աղիւս կը պատրաստէ : — Վանի՞ աղիւս պատրաստել կարող  
է արդ գործարանը 16 օրուան մէջ :

856. «Քասանելչորս արտավագար տեղ գնուած է, ամեն մէկը  
36 մանէթ և 98 կոսկէկով»: — Ո՞րքան վճարուեցաւ ամբողջ  
տեղին համար:

857. Տօնավաճառի մը մէջ 38 հակ (պինու) թէյ  
դնուեցաւ, ամեն մէկը 286 մանէթ 40 կոպէկով, և զանոնք  
տեղ հասցնելու համար՝ ամեն մէկ հակին 3 մանէթ և 68  
կոպ. Վճարուեցաւ: — Քանիի՞ նստաւ բոլոր թէյը ճանապար-  
հի ծախըռվը միասին:

858. Գործարանի մը մէջ 56 մարդ և 49 կանայք կաշ-  
խատին : Խւրաքանչեւր մարդ շաբաթը 10 մանէթ 65 կոտ.  
կստանայ . իսկ խւրաքանչեւր կի՞ն՝ 8 մանէթ 75 կոտ .— Քնչ-  
քանով աւելի փող կստանան բոլոր այլ մարդիկը կանանցնէ ,  
39 ամսուան մէջ :

859. Գ-իլք մը 58 թերթ ունէր, ամեն մէկ տպագրական թերթը 16 երես հաշուելով, և ամեն մէկ երեսին վրայ 38-ական տող. իսկ առղին մէջ՝ 42-ական տառ.՝ — «Քանի՞ տառ կայ ընդ ամենը այս գրքին մէջ :

860. Բերդ մը զբաւելու ժամանակ՝ 198 հրազենք 36-ական հայուսած տուին, և ամեն մէկ անգամ այդ հրազենքները լցածնուն՝ 16-ական վունթ վառօդ կը գործածուեր:— Քանի՞ վունթ վառօդ վասնուեցաւ:

861. Կաւաշանգիստ բերած էին 675 տակառ վառելի իւղ, ամեն մէկուն մէջ 36-ական փութ գտնուելով: — Ի՞նչ քան պիտի արժէ ամբողջ իւղն, եթէ նորա 1 փունթը 12 կոպ. գնահատելու լինին:

862. Երկաթուղոյ մը շինութեան ամեն մէկ 500 ձուղաշափը 17,835 մանէթի նստաւ: Այդ երկաթաշէն ճանապարհը 157 վերստ երկարութեան հասած ժամանակը՝ ի՞նչ քանի պիտի նստի:

863. Չուխայի գործարան մը՝ օրական ծախք՝ 138 մանէթ՝ 74 կոպ. կը պահանջէ. իսկ ինք շահ կը բերէ՝ ամիսը 7,546 մանէթ 86 կոպ.: — Ո՞րքան զուտ շահ կը բերէ այս գործարանը մէկ տարուան մէջ. (տարին 365 օր հաշուելով):

864. Փայտածախ մը 786 արտավար անտառը 95,742 մանէթի գնելով՝ ամեն մէկ արտավարը 178 մանէթ և 45-ական կոպէկով ծախեց: — Ո՞րքան շահ ստացաւ նա:

865. 736 վերստ հեռաւորութեան վրայ հեռաղիծ մը գնել պէտք էր, և ամեն մէկ վերստին համար 247 փութ երկաթաթել կը պահանջուէր, յորմէ արդէն 93,846 փութ պատրաստուած էր: — Ո՞րքան երկաթաթել դեռ պէտք կը լինի պատրաստել:

866. Մէկ ամսուայ մէջ երկաթուղիով 360 շոգեկառք ասլրանք ուղարկուեցաւ, ամեն մէկուն մէջ 536-ական փութ բեռցուած: — Ի՞նչ քան փող ստացուեցաւ այս ապրանաց աեղափոխութեանը համար, եթէ ամեն մէկ փութէն 45 կոպ. պահանջուեցաւ:

867. Գաղղիսան 9,594 քառակուսի մղոն տարածութեամբ աել բռնած է, և ամեն մէկ մղոնին վրայ 3,836 բռնակիչ կը հաշուի: — Քանի է Գաղղիս բովանդակ բռնակչաց թիւը:

868. Մէկ տարուան մէջ քաղաքէ մը 2,568 փութ ծըխախոտ արտասահման ուղարկուեցաւ: — Ի՞նչ քան կարժէ ուշ

դարկուած ամբողջ ծխախոտը, եթէ նորա մէկ փութը 56 մանէթ և 38 կոպ. կարժէ:

869. Եւրոպիոյ մէջ 1 քառակուսի մղոն աեղին վրայ՝ միջին հաշուով՝ 1,550 մարդ կը հաշուի: — Քանի բռնակիչ կայ ուրիմ 180,000 քառ. մղոն տարածութեանը վրայ:

870. 1858 թուականին Ենգղիոյ մէջ՝ 7,254 միլիոն պերկովից հանքային ածուխ հանուեցաւ. Ամերիկայի միացեալ նահանգաց մէջ՝ 360 միլիոն ձէնտաներ (պետքը) Պէլացիոյ մէջ՝ 992 միլիոն պերկովից. Պրուսիոյ մէջ՝ 8,432 փութ. Գաղղիոյ մէջ՝ 100 միլիոն ձէնտաներ. իսկ Աւստրիոյ մէջ՝ 35 միլիոն ձէնտաներ ածուխ: — Քանի փութով Ենգղիոյ մէջ միւս բոլոր տէրութեանց մէջ հանուած ածուխներէն աւելի հանուեցաւ, եթէ յայտնի է որ 1 ձէնտաները 62 փութի հաւասար է:

871. Երկաթուղի շինել կամեցող ընկերութիւն մը՝ նորա պիտոյիցը համար 4 միլիոն մանէթ վճարեց հետեւեալ եղանակաւ: Վոաջին տարին՝ իւրաքանչեւր ամիս 48,560-ական մանէթ հասոյց. երկուրդ տարին՝ դարձեալ իւրաքանչեւր ամիս 73,896-ական մանէթ. երրորդ տարին՝ նոյն եղանակաւ 86,745-ական մանէթ. իսկ մնայեալ բոլոր փողը՝ չորրորդ տարուան մէջ մէկ անգամնով վճարեց: — Ո՞րքան ստակ վճարած եղաւ այս վերջի տարին:

Բ ա ժ ա ն ո ւ ն ա.

872. Ութը հաւասարաչափ արկղներու մէջ 2,120 խնձոր կար: — Քանի հատ պարունակած է ամեն մէկ արկղը:

873. Ռանսապարհորդ մը՝ օրուան մէջ երկաթուղիով 2,436 վերստ անցաւ: — Քանի վերստ կանցնէր նա՝ միջին հաշուով՝ մէկ օրուան մէջ:

874. Ինը վերստ երկարութիւն ունեցաղ երկաթուղայ մը շինութեանը համար 128,502 մանէթ վճարուած է : — Քանի՞օ պիտի նատի ամեն մէկ վերսար :

875. 4,109 կանգուն երկարութեամբ չուխայէն զինաւորակուներ շինած են, ամեն մէկ հատին համար 7-ական կանգուն ի գործ դնելով : — Քանի՞օ վերսրկու շինւեցաւ այդքան չուխայէն :

876. Սերմանացան մը ամառուան մէջ՝ 3,234 վարունդ հաւաքեց : Մէկ ուրիշ սերմանացան մը ևս՝ 6 անգամով առաջնէն պակաս հաւաքեց : — Ո՞րքան հաւաքեցին երկուքը միասին :

877. Տասնեռութը սայլերու վրայ 2,250 աղիւս բերուած էր : — Քանիկան հատ դրուած էր ամեն մէկ սայլին վրայ :

878. Ենտառ մը կտրելու համար 24 փայտահատ 177 մանէթ և 12 կող. ստացան : — Ո՞րքան ստացաւ իւրաքանչիւր աշխատաւորը :

879. Գործարանի մը մէջ՝ 11,424 մանէթի հրացան պատրաստուած է, և նոցանէ ամեն մէկը 48 մանէթի գնահատուած : — Քանի՞օ հրացան շինուած է :

880. 401,760 տառ պարունակող գրքի մը մէջ քանի՞օ երես կայ, եթէ ամեն մէկուն վրայ 36-ական տող՝ և ամեն մէկ տողին վրայ ևս 45-ական տառ կը գտնուի :

881. Գործարանի մը մէջ՝ աշխատաւորին տարեկան վարձ 96 մանէթ կը վճարուի : — Քանի՞օ աշխատաւոր կար այդ գործարանին մէջ, եթէ բոլորին վճարուած է տարեկան վարձ 45,696 մանէթ :

882. Երկրագնդիս Հասարակածը (Եկվատօր) 360 աստիճանի բաժանուած է, և ամեն մէկ աստիճանը 105 վերստ տարածութեան : — Քանի՞օ ժամուան մէջ կարելի կը լինէր

երկրագնդիս չորս կողմը ճանապարհորդելով՝ ժամը 45 վերստ կարելով:

883. Երկաթուղայ մը գիծը, որոյ վերայ 26 կայարան կար, ամեն մէկը իրարմէ 25-ական վերստ հեռաւորութեամբ, 7,436 հազար մանէթ կարժէ : — Քանի՞օ կարժէ ամեն մէկ վերստը :

884. Մարդուն մէկը գետին գնեց՝ Առւսակալութեանց մէկուն մէջ՝ 126 արտափար. իսկ ուրիշի մը մէջ՝ 28 արտափարով առաջինէն աւելի, և բոլորին համար 12,880 մանէթ վճարեց : — Քանիի՞ն նատաւ իրեն ամեն արտափարը :

885. Գինավաճառը 299 մանէթ և 20 կոպէկով 2 տակառ գինի գնեց : «Նոցանէ ամեն մէկուն մէջէն 247-ական շեշ գինի ելաւ : — Քանի՞օ պարտաւոր է նա ծախել այս գինւոյն ամեն մէկ շիշը, որպէս զի ամբողջ գինիէն 120 մանէթ և 70 կոպ. շահ տեսնէ :

886. Փայտածախին մէկը՝ տարուան մը մէջ՝ 784 ձողաչափ փայտը 2,548 մանէթով ծախեց : — Քանի՞օ ծախած եղաւ նա ամեն մէկ ձողաչափը :

887. Գործարան մը՝ 24 ժամուան մէջ՝ 784 կանգուն հիւստդրական երկաթաթել կը պատրաստէ : — Քանի՞օ օրուան մէջ միեւնոյն գործարանը կարող է 95 վերստ տարածութեան վրայ դրուիլ՝ պէտք եղած երկաթաթելը պատրաստել :

888. Տպարանատան մը գրաշարը՝ մէկ ժամուան մէջ կարող է 992 տառ շարել : Եմեն մէկ տողին մէջ 46-ական տառ գտնուող, և ամեն մէկ երեսին մէջ 36-ական տող լինելով, և 248 երեսէ բաղկացեալ զիրք մը՝ քանի՞օ ժամուան մէջ կարող է պատրաստել :

889. Մէկ շարաթուաց մէջ՝ մի միայն մէկ երկաթուղայ վրայով՝ 38 վաճառաց կառք ուղարկուեցան, ամեն մէկուն

մէջ 355-ական փութ ծանրութիւն լինելով, և այս ուղարկ-  
մանը համար 9,740 մանեթ 16 կոպ. ընդունուեցաւ: —  
Ի՞նչքան առնուած եղաւ ամեն մէկ փութին համար:

890. Կողման կուսակալութեան տարածութիւնն է  
2,198 քառակուսի մղոն. և ունի՝ 1,017,674 բնակիչ: —  
Քանի՞ հոգի կիյնայ ամեն մէկ քառակուսի մղոնին վրայ:

891. Ճրագի զործարանի մը համար 2,386 տակառ ճարպ  
դնուած է, 23,001 մանեթ և 4 կոպէկի: — Քանի՞ կարժէ  
ամեն մէկ տակառ:

892. Երկաթուղեաց համար անշրաժեշտ հարկաւոր ե-  
ղող 1,000 հաս շոգեկառաց համար՝ զործարանի մը վճա-  
րուած է 4,348,560 մանեթ: — Ո՞րքան դեռ պէտք կը լինի  
վճարել նոյն տեսակ 175 շոգեկառաց համար:

893. Տէրութեան մը մէջ՝ բոլոր զօրքը 600 դունդելու-  
բաժանուած էր, ամեն մէկուն մէջ 2,400 մարդ գտնուելով: —  
Դայց այժմ այդ գնդելուն ձեւ փոխելով՝ ամեն մէկը 1,000-  
ական հոգիէ բաղկացուած է: — Քանիկան հոգի պէտք է գրա-  
նուի այժմ ամեն մէկուն մէջ:

894. Երկէս մինչև արեգակին հասնելու միջոցն է  
144,732,840 վերստ, զոր զրեթէ 24,042 կիսատրամագիծ բո-  
լորակի կը հաւասարի: — Քանի՞ վերստ կը պարունակէ երկ-  
րադնդիս կիսատրամագիծ բոլորակը:

895. Լուսի մակերեսիթը (поверхность) 185,000 քա-  
ռակուսի մղոն է. իսկ երկրիս մակերեսիթը 9,250,000 քառ.  
մղոն: — Քանի՞ անգամով այս վերջինին մարկերեսիթը առա-  
ջինին մէծ է:

Գ) ԳՐԱՌՈՐ ԽԱՐՄԱՆ ԽՆԴԻՐՔ Ի ՎԵՐԱՑ ՀՈՐԵՑՈՒԹԵԱՆՑ.

896. Ասկերէչին մէկը մէկ տարուայ ընթացքին մէջ՝ 100  
զօլոտնիկ սոկեղէն շղթաներ ծախեց, ամեն մէկը 30-ական  
մանեթ գնահատելով, և 100 հատ ևս կոճակ, ամեն մէկը  
շղթաներուն գնէն 10-ական մանեթով պակաս: — Ո՞րքան  
փող ձեռք բերաւ նա սոյն տարուան մէջ:

897. Ըստամբաց վրայ յարձակման մը ժամանակ՝ 5  
դունդ զինուոր ուղարկուեցաւ, ամեն մէկը երկոտասան մարդէ  
բաղկացած: Եյս գունդերը վաշտերու (էսկադրոն) բաժա-  
նուած էին, ամեն մէկուն մէջ 30-ական տասնեակ հոգի լի-  
նելով: Յարձակման ժամանակ վաշտերէն և հատը կոտրուե-  
ցան. իսկ մնացեալները քաղաք վերադարձան: — Քանի՞ էր  
քաղաք վերադարձող զօրաց թիւը:

898. Պատղավաճառատուն մը 10 արկդ լիմոն բերուեցաւ,  
ամեն մէկուն մէջ մէկուկէս հաղարեակ լիմոն գտնուելով, և  
նոցա մէկ հարիւրեակը Յ մանեթի գնահատուած: Եյս լի-  
մոններէն 25 մրգավաճառաց 8-ական տասնեակ ծախուեցան.  
տասնեակը 40-ական կոպէկով. Յ հարիւրեակը փացած էր.  
իսկ մնացեալներուն տասնեակը 50-ական կոպէկով գնողաց ծա-  
խուեցաւ: — Ո՞րքան շահ ստացաւ այս վաճառատունը  
լիմոններէն:

899. Վաճառականնեական նաւով մը արտասահմանէն 10  
արկդ լինձոր բերուած է, ամեն մէկուն մէջ 2-ական հաղար-  
եակ և 4-ական տասնեակ լինձոր լցուած: Եյս պտուղները  
պարկերու մէջ լցուցին: Քառասուն հատ մէծ պարկերու մէջ  
2-ական հարիւրեակ և 6-ական տասնեակ, և 100 հատ ևս  
փոքր պարկաց մէջ: — Ի՞նչ քանիկաւթեամբ լինձոր լցուած  
եղաւ փոքր պարկաց ամեն մէկուն մէջ:

**900.** Հեղինակ մը՝ իւր յօրինած գրաւոր աշխատութեան  
4 հազար օրինակ տպագրելու տուաւ։ “Կոցանէ” 8 հարիւր-  
եակը, ամեն մէկ օրինակը՝ 50-ական կոպէկով ծախեց։ 24  
հարիւրեակը՝ հատը 60-ական կոսկ գնահատելով՝ գրավաճա-  
ռաց յանձնեց։ իսկ մնացեալները կը կամենայ ծախել։ ամեն  
մէկ 10 օրինակաց համար՝ 5 մանէթ և 50 կոսկ գնե-  
լով։ — Ո՞րքան զուտ շահ պէտք է պատճայ, եթէ տպագրա-  
կան ծախըրը իրեն 800 մանէթի նստած է։

**901.** Գրավաճառ մը 3,400 մանէթով տպագրեալ հե-  
ղինակութիւնը գնեց։ 2,500 օրինակ մէկ տեսակին, ամեն մէկ  
10 հատին 4-ական մանէթ վճարելով, և երկուասան հա-  
րիւրեակ ես՝ միւս տեսակին։ — Ո՞րքան վճարեց նա երկորդ  
տեսակ գրաւոր աշխատութեան տպեալ ամեն մէկ օրինա-  
կին համար։

**902.** Մրգավաճառանոց մը 10 արկղ նարինջ բերուեցաւ,  
ամեն մէկուն մէջ 12 հարիւրեակ նարինջ լինելով, և ամեն  
մէկ տասնեաւ 40 կոսկ գնահատուելով։ Այդ վաճառանոցէն  
30 մրգավաճառաց 10-ական տասնեակ նարինջ ծախուեցաւ,  
ամեն մէկ տասնեակը 50-ական կոպէկով, և 4 հազարեակ նա-  
րինջ ես ուրիշ խանութ մը յանձնուեցաւ, ամեն մէկ հա-  
րիւրեակին համար 5 մանէթ տասնալու պայմանաւ։ իսկ մնա-  
ցեալ նարինջները՝ մէկ տասնեակը 60 կոպէկով գնողաց ծա-  
խուեցաւ։ — Ո՞րքան շահ ձեռք բերաւ վերոյիշեալ մրգավա-  
ճառանոցը։

**903.** Մրգավաճառ մը 3,456 խնձոր պարունակով արկղ  
մը գնեց, ամեն մէկ հարիւրեակը 4 մանէթ գնահատելով։  
իսկ ինքն սկսաւ մէկ տասնեակը 50 կոպէկով ծախել։ — Ո՞ր-  
քան շահեցաւ այս մրգավաճառը։

**904.** Պանջարացան մը իւր 8 ածուներէն 1,800-ական  
հատ վարունգ հաւաքեց, և իւր միւտ ածուներէն ես՝ 560-

ական հատ, և նոցա մէկ հարիւրեակը 2-ական մանէթով  
ծախեց։ — Ո՞րքան շահ ձեռք բերած եղաւ նա։

**905.** Խոհնութական մը արտասահմանէն 96 հազար նա-  
րինջ բերել տուաւ, դորոնք արկղներու մէջ գրած ուղար-  
կուեցան, ամեն մէկուն մէջ 24-ական հարիւրեակ լցուցած։  
“Ա, ամեն մէկ արկղին համար 154 մանէթ վճարեց։ իսկ ինքը  
1,000 հատը 84 մանէթով ծախեց։ — Ո՞րքան շահեցաւ նա։

**906.** Ուժը գործաւոր գործարանի մը մէջ հաշուի ժա-  
մանակ ամսական աշխատութեան համար 9 հատ 10-ական  
մանէթնոց թղթաջրամ, 9 հատ մէկական մանէթնոց, 4  
գրիվէնիկ և 4 կոսկ ստացան։ — Ո՞րքան կը պատկանի իւրա-  
քանչերին՝ բաժանման ժամանակ։

**907.** Մրգավաճառանոցը 6 արկղ նարինջ բերուեցաւ  
ամեն մէկուն մէջ 165-ական հատ գտնուելով։ Ես նարինջ-  
ներէն 6 պաղպաղառաց 125-ական հատ ծախուեցաւ, հա-  
րիւրեակը 4 մանէթով։ իսկ մնացեալներուն ամեն մէկ հատը  
6-ական կոպէկով ծախել ուղուեցաւ։ — Ի՞նչքան շահ կտա-  
նաց այդ մրգավաճառանոցը բոլոր նարինջներէն, եթէ ամեն  
մէկ արկղը նորա 6-ական մանէթի նստած է։

**908.** Մրգավաճառանոցի մը մէջ ստուղներով լցուած  
2 արկղ կար։ Վէկ հատին մէջ 2 հարիւրեակ խնձոր և 60  
տասնեակ տանձ, և այս բոլորը 46 մանէթ կարծէր։ իսկ միւ-  
սին մէջ նմանապէս՝ 2 հարիւրեակ խնձոր և 90 տասնեակ  
տանձ, ընդ ամենը 64 մանէթ արժողութեամբ։ — Կահի  
կարծէ տանձին և խնձորին տասնեակը։

**909.** Գեղջուհի մը 6 կողով հաւկիթ վաճառանոց բե-  
րաւ, ամեն մէկուն մէջ 137-ական հատ լինելով։ Կոցա մանէ-  
թներէն 254 հատ տասնեակը 20-ական կոպէկով ծախեց։ իսկ  
մնացեալ խոշորներուն հարիւրեակը 3-ական մանէթով։ —  
Ո՞րքան փող ստացաւ նա այս բոլոր հաւկիթներուն համար։

910. Աերմանացանին մէկը առաջի շաբաթուան մէջ 258 վարունգ հաւաքեց . երկրորդ շաբաթը՝ 236 հատ, երրորդ շաբաթը՝ 185 հատ, չորրորդ շաբաթը՝ 254 հատ, և ամեն մէկ հարիւրեակը 2-ական մանէթով ծախեց : — Ո՞րքան փող ստացաւ նա իւր հաւաքած բոլոր վարունգներուն համար :

911. Պարտիզպան մը պարտէզէն 4 պարկ խնձոր հաւաքեց : Մէկուն մէջ 256 հատ կար, միսին մէջ 238 հատ, երրորդին մէջ՝ 165 հատ, և չորրորդին մէջ՝ 283 հատ : Եյս խնձորներէն 369 հատը նա իրեն համար վար դրաւ . իսկ մնացեալներուն տասնեակը 40-ական կոսէկով ծախեց : — Ո՞րքան փող ձեռք ձգեց նա :

912. Եղելու համար 3 սայլ վարունգ գնուած է : Մէկուն մէջ 8 պարկ, ամեն մէկը 236-ական հատ պարունակելով, և երկրորդ սայլին մէջ՝ 7 պարկ, ամեն մէկը 274-ական հատ պարունակելով, և երրորդ սայլին մէջ՝ 9 պարկ, ամեն մէկը 196-ական հատ պարունակած : Եյս վարունգները համահաւասար մեծութեամբ 10 տակառաց մէջ աղեցին : — Քանի՞ վարունգ դրուեցաւ ամեն մէկ տակառին մէջ, երբ տեսան որ նոցանէ 190 հատը անպիտանացած լինելով աղել չէր արժէր :

913. Շտեմարանի մը շինութեանը համար 9 սայլ աղեւ բերուեցաւ, ամեն մէկուն մէջ 234-ական հատ բեռցուած . յետոյ 8 սայլ ևս, ամեն մէկուն մէջ 168-ական հատ : Եյս բերուած աղիւսները՝ համահաւասար թուով 10 կոյտ ձեւցուցին : — Քանի՞ աղեւս դրուած եղաւ ամեն մէկ կոյտին մէջ :

914. Պատերազմէ մը յետոյ՝ գնդէ մը 8 վաշտ զինուոր մնաց, ամեն մէկուն մէջ 137-ական հոգի զտնուելով . իսկ միւսէ մը՝ 9 վաշտ, ամեն մէկուն մէջ 126-ական մարդք : Եյս ամենքը խումբ մը կազմեցին, և 10 վաշտ ձեւցուցին : — Քանի՞ հոգիէ բադիացած եղաւ այս վաշտերէն ամեն մէկը :

915. Ութը տակառ վառելի իւղ խանութ բերուեցաւ, ամեն մէկուն մէջ 1,044 ֆունթ պարունակած, և գոր 9 տակառ ևս, ամեն մէկը 1,052-ական ֆունթ իւղ ունենալով : Եյս բոլոր իւղը 10 համահաւասար մեծութեամբ տակառաց մէջ լինին : — Ի՞նչ քանակութեամբ իւղ պարունակեց ամեն մէկը, և ո՞րքան կարժէ 1 տակառը, եթէ իւղին 1 ֆութը 10 կոպ . զնահատուած է :

916. Մարդուն մէկը ամիսը 60 մանէթ 60 կոպ. ոռձիկ ստանալով, բնակարանի համար ամիսը 12 մանէթ 50 կոպ. կը վճարէր, և վառելափայտի ամեն մէկ ձողաչափին համար՝ 2-ական մանէթ 85 կոպէկ, յորմէ ամեն մէկ 4 ամիսը 5-ական ձողաչափի կը վասնուէր . սննդեան համար՝ ամիսը 10 մանէթ 80 կոպ. զգեստեղինաց համար՝ տարին 110 մանէթ, և վերջապէս մանր ծախուց համար՝ ամիսը 5 մանէթ 30 կոպ. — Ո՞րքան փող այս մարդը կաւելցնէ ամբողջ տարուան մէջ :

917. Շանապարհորդին մէկը ընդ ամենը 8,994 վերստ ճանապարհ արաւ . այն է, 9 օր ձիով գնաց, օրը 142-ական վերստ յառաջանալով . 15 օր՝ երկաթուղիով, 356-ական վերստ. 24 օր շոգենաւով՝ օրը 98-ական վերստ . իսկ մնացեալ ճանապարհը հետիւտն գնաց : — Քանի՞ վերստ ոտով ճանապարհ արած եղաւ նա :

918. Ութը զ/ւզացի՝ 12 ձիերու վրայ բեռցուցած՝ 36 չետվելրա հաճար քաղաք բերին, և ամեն մէկ չետվելրա 6 մանէթ 28-ական կոպէկով ծախեցին : Ատացուած փողէն նոքա ամեն մէկ ձիուն համար 1 մանէթ և 38-ական կոպ. ծախեցին, և 75-ական կոպ. մարդ զլուխ . իսկ մնացեալ փողն՝ մէջերը հաւասարապէս բաժանեցին : — Ո՞րքան պատկանեցաւ իւրաքանչեւրին :

919. Պղնձի գործալանի մը տէրը 58 թնդանօթ ծախեց, ամեն մէկը 456 մանէթով, և 17 զանգակ, ամեն մէկը

179. մանէթով թնդանօթներուն արժածէն պակաս գնով :  
— Ո՞րքան փող ձեռք բերաւ նա :

920. Վաթառնեռութը մանէթ և 40 կոպէկով 38 երկոտասանեակ պնակ գնուեցաւ, և նոցանէ 144 համար՝ երկոտասանեակ 2 մանէթ և 40 ական կոպէկով ծախուեցաւ . իսկ մնացեալներուն երկոտասանեակը 2 մանէթ և 10 ական կոպէկով : — Ո՞րքան շահ ձեռք բերուեցաւ :

921. Շողենաւով մը 49 տակառ շաքար բերուեցաւ, ընդամենը 6,468 մանէթ արժողութեամբ : Այս տակառները շողենաւին մէջ զետեղած ժամանակները՝ նոցանէ 1 համար ջրէն մէջ զլսրուեցաւ և վեստուեցաւ : — Ո՞րքան փող պիտի ստանայ նաւատէրը շաքարաց տեղափոխութեանը վարձ, եթէ փճացեալ տակառ մը շաքարին զինը զեղջում անելներէն յետոյ, նոցա սմեն մէկին համար 8 մանէթ և 56 կոպ. վճարելու պարտաւոր մնան :

922. Աշակերտ մը 1,348 հատ զերմանական բառեր արտադրեց . այն է, առաջին 6 օրը՝ նա օրական 126 բառ արտադրեց . իսկ մնացեալ բառերը՝ 8 օրուան մէջ վերջացուց : — Քանիկա՞ն բառ զրած եղաւ նա այս 8 առուրց իւրաքանչեւրին մէջ :

923. Քանապարհորդ մը իւր ուղերդութեանը ժամանակ երկաթուղիով 2,448 վերսա անցաւ, կառքով՝ 4 անգամ պակաս տարածութիւն . ծովով՝ կառ քով և շողեկառ քով գնացած արագութենէն 15 անգամով պակաս : — Քանի՞ վերսա ժանապարհորդեց նա այս երեք եղանակաւ :

924. Քառասունեւշինդ ձողաչափ երկարութեամբ երկաթուղոյ մը շնութեանը համար 1,035 փութ երկաթեայ գառազան պէտք է . իսկ գործարանէն միայն 29 ձողաչափ երկարութեամբ ժանապարհի համար պէտք եղած գառազանները

բերուած էին : — Քանի՞ փութ զեր հարկաւոր կը լինի ժանապարհը ամբողջացնելու համար :

925. Քանապարհորդ մը՝ օրը 256-ական վերսա կը յառաջանար, և այս եղանակաւ ամբողջ ամիս մը իւր ժանապարհորդութիւնը շարունակեց . իսկ իւր վերագարձը 28 օրուան մէջ կատարեց : — Քանիկիմն վերսա կանցնէր նա օրը իւր վերագարանալու միջոցին :

926. Երկու ժանապարհորդ իւրարու պատահեցան, և իւրարմէ տեղեկացան որ իրենցմէ իւրաքանչեւրը ժանապարհ ելած է այն տեղէն՝ ուր որ կերթայ երկրորդը : «Նոցանէ մէկուն մինչև միւսին պատահիլ 15 օր անցել էր, օրը 84 վերսա յառաջանալով . իսկ միւսը 28 օր, օրը 90 վերսա յառաջանալով : — Քանի՞ օրուան մէջ նոցանէ իւրաքանչեւրը մնացեալ ժանապարհին տարածութիւնը կը կտրէ, եթէ նորամիւնյն արագութեամբ երթալու լինին :

927. Գործաւոր մը գործարանին մէջ՝ մէկ տարուայ շրջանին՝ ամսական 28 մանէթ և 50 կոպ. կտանար . իսկ իւր ծախուցը համար շաբաթը 4 մանէթ և 95 կոպ. կը վատնէր : Այս անձը իւր աւելացուցած փողովը առուտուր անել սկսաւ, և ունեցած բոլոր փողովը 36 չետվելու գարի գնեց : — Ո՞րքան վճարեց ամեն մէկ չետվելուին :

928. Գործաւոր մը տարիկան 144 մանէթ և 84 կոպ. վարձով ծառայութեան մնաւ : Երկու տարի և 4 ամիս ծառայելէն յետոյ թողուց իւր տեղը, և ամբողջմէն փողին սահացաւ 283 մանէթ և 56 կոպ. և մնացեալ պահանջին փոխարէն՝ ձի մը : — Քանի՞ կարժէ այս կենդանին :

929. Առագաստանաւ մը շաբաթը 184 վերսա յառաջանալով՝ 48 օրէն նշանակիալ տեղը հասաւ . իսկ վերագարձին՝ այս նաւը օրը 96 վերսա կը կտրէր : — Քանի՞ օր տեղ նորս վերագարձը :

930. Ը աքարով բեռնաւորած սայլաշաբք (օбоՅԵ) մը տօնավաճառ ուղարկուեցաւ այն է, 16 սայլ՝ Յական տակառ դրուած, ընդ ամենը 1,632 փութ ծանրութեամբ շաքար ունենալով: — Քանի՞ կարժէ ամեն մէկ տակառը, եթէ շաքարին փութը 6 մանէթ 82 կոպ. գնահատուած է:

931. Երկու շոգենաւ՝ որոնք 6,656 ձողաչափի իրարմէ շեռաւորութեան մէջ կը գտնուէին՝ իրարու հանդէպ գնացին: — Քանի՞ ժամէն իրարու կը պատահին նոքա, եթէ նոցանէ մէկը՝ մէկ վայրկենի մէջ 14 ձողաչափ. իսկ միւսը՝ նոյնքան ժամանակուան մէջ՝ 18 ձողաչափ կը յառաջանայ:

932. Առոկովէն Եակուտսկա գտնուած ճանապարհի միջոցն է 7,945 վերստ: Երկու ճանապարհորդ միւնցին ժամանակ այս երկու քաղաքներէն իրարու հանդէպ ճանապարհ ելան, և 35 օր անցանելէն յետոյ իրարու պատահեցան. Առոկովէն եկողը օրը 136 վերստ կը յառաջանար: — Քանիկան վերստ օրը կը յառաջանար Եակուտսկայէն ճանապարհ ելնողը:

933. Առոկովէն դէպի Օդեսսայ 1,358 վերստ կը համարուի: Եռաջին 8 օրը ճանապարհորդը կառքով անցաւ, իսկ մնացեալ 9 օրը՝ հետիոտն յառաջացաւ, օրը 54 վերստ կը լուի: Եռաջին 8 օրերը քանիկան վերստ կերթար նա:

934. Երկու վաճառական իրարու շետ վաճառք կը փոխանակեն: «Եոցանէ մէկը կառաջարկէ 7 փութ շաքար, փութը 6 մանէթ 82 կոպ. գնահատելով. իսկ միւսը նորա փոխարէն 9 փունթ չայ, փունթին 4 մանէթ 35 կոպ. դին դնելով: — Եոցանէ որը որբանով միւսին պարտաւոր կը մնայ:

935. Առական մը 3 տեսակ անուշեղէն իրարու խառնեց: Աէկ անօթին մէջ 8 փունթ կար, փունթը 1 մանէթ 20 կոպ. արժող. միւս անօթին մէջ՝ 6 փունթ, փունթը 75 կոպէկնոց. իսկ երրորդին մէջ՝ 10 փունթ: — Ո՞րքան

կարժէ երրորդ անօթին մէջ եղած անուշեղէնին. Վունժը, եթէ բոլոր խառնութին փունթը 95 կոպ. կարժէ:

936. Խանութի մը համար 76 երկոտասանեակ պնակ գնուեցաւ 136 մանէթ 80 կոպէկի: Առքա տեղափոխելու ժամանակ 14 հատը կոտրտեցաւ: — Քանի՞ պէտք է ծախել ամեն մէկ պնակը, որպէս վել բոլորէն 24 մանէթ և 84 կոպ. շահ ստացուի:

937. Ըղիւսաշէն շտեմարան մը շինելու համար՝ նախ և առաջ 25 սայլ աղիւս բերուեցաւ, ամեն մէկուն մէջ 126-ական հատ դրուած. յետոյ 36 սայլ ևս, վերստին ամեն մէկուն մէջ 125-ական հատ: — Քանի՞ սայլ աղիւս դեռ պէտք է բերել, եթէ գնուած ամբողջ աղիւսներուն թիւն է 16,600, ամեն մէկ սայլին մէջ 180-ական հատ գնելով:

938. Գիւղացւոյն մէկը 4,500 վարունդ ունենալով, որոց մէկ հարիւրեակը 60 կոպ. կարժէր, ուրիշ գիւղացւոյ մը ստուաւ, նոցա փոխարէն 9 չետվերիկ ինձոր առնելով, ամեն մէկը 1 մանէթ 20 կոպ. արժողութեամբ, և 2 փութ աղ, փութը 2 մանէթ 50 կոպէկէն. իսկ մնացեալ դրամական պահանջմանը աեղ՝ աշխատեցնելու համար ձի մը առաւ նորանե: — Քանի՞ օր պիտի գործածէ այդ գրաստը, եթէ նորա աշխատութեան օրական վարձը 80 կոպ. կը համարուի:

939. Տան մը շինութեանը համար գործարանէն 32,000 աղիւս առնուած է 300 մանէթ 80 կոպ. արժողութեամբ: — Քանիկան նստաւ այս աղիւսներուն մէկ հարիւրեակը, և ի՞նչքան արժեց նոցա տեղափոխութիւնը, եթէ բացայացտ է որ 1 հազարեակ աղիւսին կրողէք՝ 1 մանէթ 25 կոպ. կը վճարուի:

940. Տօնավաճառի մը մէջ՝ մէկ վաճառականը 1,400 փութ շաքար ծախեց. միւսը 1,050 կանգուն թաւիշ, եր-

բորդը՝ 1,200 վեցու գինի։ Այս երեքն առ համաշաւասար քանակութեամբ փող ստացան. իսկ բոլորին մէկանց ձեռք բերած գումարը հասաւ 50,400 մանէթի։ — Քանիի՞ կը ծախէին նոքա շաբարին փութը, թաւշին կանգունը և զինոյն վեցըօն։

941. Աղիւսի գործարանէ մը 320,000 աղիւսը 4,400 մանէթով գնեցին։ — Ո՞րքան վճարած եղան մէկ հազարեակին համար։

942. Հասարակածին աստիճանը 105 վերստ տարածութեան կը հաւասարի։ — Խոչալիսի արագութեամբ՝ հասարակածին ամեն մէկ կետը երկրագնդիս առանցքին (օօԸ) բոլորտիքը պառոյտ կուտայ։

943. Երկաթուղոյ մը օրական բերած եկամուտը 1,356 մանէթ է. իսկ ելքը՝ 2,457 մանէթ շաբաթը։ — Ո՞րքան զուտ շահ կը բերէ տարին այս ճանապարհը։

944. Գործաւոր մը՝ գործարանին մէջ տարեկան 240 մանէթով վարձուեցաւ։ Այս մարդը 2 տարի 8 ամիս ծառայելն վերջը հեռացաւ այդ տեղեն, ստանալով փողիւ 470 մանէթ 50 կոպ. այլ և հանդերձելինը՝ 39 մանէթ 90 կոպ. արժողութեամբ. իսկ վերջին մնացորդ փողին տեղ, կանգունը 1 մանէթ 20 կոպ. արժողութեամբ չուխայ առաւ։ — Քանի՞ կանգուն չուխայ ձեռք բերաւ նա։

645. Վնտառագիտին մէկը անտառ մը գնեց, որոյ մէջ 72,546 ծառ կար. «Եղան հաշովը՝ ամեն մէկ 6 ծառէն՝ մէկ խորանարդ ձողաչափ վառելափայտ պիտի ստացուէր։ Արդ այսքան քանակութեամբ նա կը մտածէ 10 մանէթ 80-ական կոպէկով ծախել։ — «Եղան կարծեօքը ո՞րքան զուտ շահ կարելի է ստանալ, այս անտառին 90,582 մանէթ 80 կոպ. վճարելով։

946. Գինեվաճառ մը 12 տակառ գինի գնեց, որոց ամեն մէկը 45-ական շիշ գինի կը պարունակէր, և վճարեց ամեն մէկ տակառին համար 40 մանէթ 50 կոպ. Այս գինոյն վրայ նա 50 շիշ հաւասար ջուր աւելցուց, և սկսաւ ամեն մէկ շիշը 1 մանէթ 20 կոպէկով ծախել։ — Ո՞րքան շահ ձեռք բերած եղաւ։

947. Գործաւոր մը՝ բացի կիրակի օրերէն՝ օրական ընդամենը 1 մանէթ 20 կոպ. ստանալով, իւրաքանչիւր շաբաթը նա 1 մանէթ 24 կոպ. աւելցուց։ — Ո՞րքան փող վատնած եղաւ նա 2 տարուան մէջ։

948. Օխնուորաց գունդ մը 24 օրուան մէջ՝ օրը 36 վերստ անցնելով՝ նշանակեալ տեղը հանել կը պարտաւորէր. բայց յետոյ տեսնուեցաւ որ, օրը նա կարող է 32-ական վերստ յառաջանալ, և դեռ 4 օր ևս ճանապարհին դադար առաւ։ — Քանի՞ օրուան մէջ աւարտեց այդ անցքը։

949. Գինեծախը արտասահմանէն 12,000 վեցու գինի բերել տուաւ, ամեն մէկ հարիսրեակ վեցքոյին 560 մանէթ վճարելով. իսկ ինքն սկսաւ այս գինիին 10 վերի պարունակող տակառիկը 64 մանէթի ծախել։ — Ո՞րքան շահուեցաւ բոլը գինիին։

950. Կանութէ մը 100 ծրար չուխային 23,540 մանէթի գնուեցաւ։ — Քանի՞ վ ծախել պէտք է այս չուխային ամեն մէկ ծրարը, որպէս զի բոլորէն 2,460 մանէթ շահ ստացուի։

951. Վարդոն մէկը տօնավաճառէն թէյ գնեց։ 15 ֆունթ՝ 3 մանէթ 40-ական կոպէկով ֆունթը. իսկ մնացեալ թէյիրուն ամեն մէկ ֆունթը՝ 3 մանէթ 25 կոպէկով է, ինքը սկսաւ 25 ֆունթը 4-ական մանէթով ծախել ֆունթը. իսկ վերջին մնացորդը՝ 3 մանէթ 75-ական կոպէկի

Վունթը, և այս բոլորէն 64 մանէթ շահ ստացաւ: — Քանի՞  
Վունթ չայ գնած էր այս մարդը:

952. Գինեվաճառին մէկը տակառ մը գինի գնեց, ամեն  
մէկ վեդրօյին 4 մանէթ 20 կոպ. վճարելով, և նորա մէջ 6  
վեդրօ ջուր խառնելով՝ ամեն մէկ վեդրօն հական մանէթով  
ծախեց: Այս պատճառաւ նա բոլոր գինիէն 49 մանէթ շա-  
հեցաւ: — Քանի՞ վեդրօ էր գնած գինին:

953. Առաջին և երկրորդ կարգաց (ելաս) սպատկան-  
եալ ճանապարհական տոմսակներէն 120 հատը շողենաւի  
մը գրասենեկին մէջ՝ 127 մանէթ և 8 կոպէկի ծախուած  
էր: Առաջին կարգի ամեն մէկ տոմսակը 1 մանէթ 47 կոպ.  
կարմէր. իսկ երկրորդինը՝ 78 կոպ.: Այս երկու կարգաց վե-  
րաբերեալ տոմսակներէն քանիկան հատ ծախուած է:

954. Մարդուն մէկը առաւօտը 3 մրգավաճառաց 100  
լիմնն առւաւ, և հրամայեց նոյց միենոյն գնով ծախել: Ե-  
րեկոյին մրգավաճառաց մէկը 1 մանէթ 50 կոպ. փողիւ, և 4  
հատ ևս չը ծախուած լիմն յետ բերաւ. միւսը 1 մանէթ  
60 կոպ. և 3 լիմն. իսկ երրորդը՝ 1 մանէթ 20 կոպ. փողիւ  
և 1 լիմն: — Քանի՞ լիմնն արուած էր այդ առաւօտը այս 3  
մրգավաճառաց իւրաքանչերին ծախելու համար:

ՃԵ.

ԽՆԴԻՐՔ Ի ՎԵՐԱՑ ՅԱՐԱՆՈՒՆ ԽԱՌԻՆ ԹՈՒՈՑ.

955. Յառտջակողմեան անիւ մը 5 կանգուն. իսկ վերջ-  
նակողմեանը 7 կանգուն շրջապար ունի: — Քանի՞ պատշատ պիտի  
անէ առաջինը վերջի անիւէն աւելի 1 վերստ և 95 ձողաչափ  
տեղ յառաջացած ժամանակները:

956. Գործարանի մը մէջ օրական 32 ճրագ կը վա-  
ռուէր, որոյ ֆունթը 30 կոպ. կարմէր: — Քանի՞ կը նստի  
յիշեալ գործարանին լրաւորութեանը ծախը 4 շաբա-  
թուան մէջ, մինչդեռ յայտնի է՝ որ այս տեսակ 4 հատ  
ճրագը՝ 28 լոտ ծանրութիւն ունի:

957. Վեց մղոն, 3 վերստ և 234 ձողաչափին մէջ քանի՞  
բթաչափ կը պարունակուի:

958. Հարիւբքսանվեց միլիոն և 144 հազար մանրերոր-  
դին մէջ քանի՞ տարի կը գտնուի: (Տարին 365 օր հա-  
շուելով):

959. Սսողաբաշխական տարին, այսինքն երկրիս արե-  
գական բոլորակիքը արած շրջանին ժամանակը, համարեա  
31,556,928 մանրերորդի տեսողութեանը հաւասար է: — Քա-  
նի՞ օր, քանի՞ ժամ, քանի՞ վայրկեան և մանրերորդ կձևա-  
նայ այսքան մանրերորդաց քանակութենէն:

960. Երկիրս իւր արեգակին բոլորակիքը արած ճանա-  
պարհորդութիւնը կամ շրջանը 365 օրուան, 5 ժամուան,  
48 վայրկենի և 46 մանրերորդի մէջ կը կատարէ. իսկ լու-  
սինը՝ իւր երկրիս բոլորակիքը արած պտոյաը՝ 27 օրուան 7  
ժամուան և 5 մանրերորդի մէջ կը լրացընէ: — Ինչքանով  
երկիրս իւր ճանապարհորդութեանը մէջ լուսոյն արածէն  
աւելի ժամանակ կը գործածէ:

961. 12 շաբաթուան մէջ գործարանի մը համար 8  
փութ, 25 փունթ և 4 լոտ շաքար կը վասնուի: — Ի՞նչ  
քանակութեամբ շաքար պահեստի ունենալ պէտք է ամբողջ  
մէկ տարուան բաւականանալու համար: (Տարին 52 շաբաթ  
և 1 օր հաշուելով):

962. Քաղաքական հեռագրաթելը՝ 10 վերստով աւելի  
հեռացնել պէտք եղաւ: Այս նպատակաւ 16 կտոր երկաթա-

թել առնուեցաւ, ամեն մէլը 85 ձողաչափ և 1 կանգուն չեռաւորութիւն ունենալով, և դեռ 24 ուրիշ երկաթաթելէր, ամեն մէկուն երկարութիւնը 82 ձողաչափ և 2 կանգուն։ Ո՞րքան երկաթաթել կը պակասի դեռ այդ շինութիւնը աւարտելու համար։

963. Երկաթուղիէն 500 վերստ շեռաւորութիւն ունեցող ձանապարհի մը վլայ հարկաւոր եղաւ երկաթեայ գաւազաններ շարիւլ։ Խւրաքանչիւր շարաթ՝ 12 վերստ, 257 ձողաչափ և 4 ոտնաչափ տարածութեան վրայ այդ գաւազաններէն դրուեցաւ։ — Քանի՞ վերստ մնաց դեռ նոցանէ դրուելու Յ5 շաբաթէն յետոյ։

964. Մեքենայի մը անիւր 18 մանրերորդին մէջ՝ 1 շրջան կանէ։ — Քանի՞ պտոյտ կարող է անել այդ անիւր 2 ժամուան 40 վայրկենի և 30 մանրերորդի մէջ։

965. Չուլարանի մը մէջ՝ 24 զանգակ շինուեցաւ։ Կոցանէ ամեն մէկուն համար 87 փութ 19 փունթ և 72 զօլոտնիկ պինճ, և 1 փունթ 56 զօլ. արծաթ գնաց։ — Ո՞րքան կը կշռին բոլոր զանգակները, և քանի՞ կարժէ նոցանէ ամեն մէլը, եթէ ընդ ամենը 1,974 մանեթ արժեցուցած են։

966. Պատերազմի մը ժամանակ 43 թնդանօթ 12-ական շաբուած առին։ — Ո՞րքան վառօդ մնաց դեռ վառօդի արկղին մէջ, եթէ նորա մէջ 84 փութ և 18 փունթ վառօդ լցուցած էին, իսկ ամեն մէկ լցածնուն Յահան փունթ վառօդ կերթար, և դեռ մնացեալ վառօդէն քանի՞ անգամ լցուելու մնաց։

967. Մետաքսալաձառ մը՝ տօնալաձառէն 4 փութ 18 փունթ և 24 լոտ մետաքս վնաց։ — Ո՞րքան վճարած եղաւ նա, եթէ 12 փունթ կշռող մետաքսին ծրարը 103 մանեթ և 68 կող. զնաչառուած է։

968. Գործարանի մը համար 3 փութ 10 ֆունթ և 24 լոա թէյ գնուած է. որոյ 1 ֆունթը՝ 1 մանեթ 60 կող. կալժէ։ — Ո՞րքան վճարուեցաւ այս թէյին։

969. Երկաթաթել շինող գործարան մը 18 ժամուան մէջ՝ 308 ձողաչափ և 4 ոտնաչափ երկարութեամբ չեռազրաթել կը պատրաստէ։ — Կ՞նչքան երկարութիւն ունի քաղաքային հեռազրատան համար պատրաստուած երկաթաթելը, եթէ նորա շինութիւնը աւարտուած է՝ 3 օրուայ 19 ժամուայ և 29 վայրկենի միջոցին մէջ։

970. Խանութի մը մէջ՝ 18,456 լոտ պղինձ կար, որոյ մէկը փութը 12 մանեթ և 80 կողէկով ծախուեցաւ։ — Ո՞րքան սոսացուեցաւ այս բոլոր պղնձէն։

971. Կերկայ ժամուս մէջ՝ տղուն մէկուն ծննդենէն մինչև այս վայրկեանս՝ 98,736 ժամ անցել է։ Այս տղան դպրոց ընդունուեցաւ, իւր ծննդենէն մինչև այն ժամանակը ունենալով 7 տարի 4 ամիս և 18 օր, և այն տեղ 2 տարի 3 ամիս և 29 օր ժամանակ անցնելով՝ դիմնազիս մուտ գործեց։ — Ո՞րքան ժամանակ է արդէն նորա գիմնազիս մոտածը։

972. Վաթսուն հոգի կերակրելու համար 15 պարկ աշխեր գնուած է, ամեն մէկուն մէջ՝ 3 փութ 18 փունթ և 9 լոտ զանուելով։ — Կ՞նչք քանակութեամբ ալիւր կը մնայ 3 շաբաթէն յետոյ, եթէ օրական ամեն մէկ մարդուն՝ 1 փունթ 14 լոտ ալիւր տալու լինին։

973. Վանուայ մը ընթացքին մէջ՝ գործարան մը՝ ճիշդ թուով՝ 72 փութ մաքուր պղինձ կը պատրաստէ։ Մէկ տարի և 10 ամիս ժամանակաւ այս կերպիւ պատրաստուած պղնձէն 24 թնդանօթ շինուեցաւ, ամեն մէլը 28 փութ և 16 փունթ ծանրութիւն ունենալով, և համահաւասար ծանրութեամբ 4 շատ ալ զանգակ։ — Ո՞րքան կը կը ամեն մէկ զանգակը։

974. Արշեստառորի մը քով 3 ֆունթ 10 լոտ և 2 զօլոտնիկ արծաթ կայ . յորոց ամեն մէկը 10 լոտ և 2 զօլոտնիկ ծանրութեամբ աշխանակներ շինեց , և նոցանէ ամեն մէկը 14 մանէթ 50-ական կոսէկով ծախսեց : — Ո՞րքան փող ստացաւ նա :

975. Ճացագործը 2 փունթ 10 ֆունթ և 8 զօլոտնիկ ալիւրէն խմոր շինեց , ամեն մէկ եփուելու հացին համար 2 ֆունթ և 12 լոտ ալիւր առնելով , և այն հացերէն ամեն մէկը 16-ական կոսէկով ծախսեց : — Ո՞րքան փող ձեռք բերաւ նա բոլոր շինած հացէն :

976. Չորս փունթ 25 ֆունթ և 20 լոտ պղնձէն՝ արշեստառորը կաթսանելու շինեց . ամեն մէկուն 3 ֆունթ և 12-ական լոտ ծանրութիւն տալով , և նոցա ամեն մէկը 1 մանէթ և 95-ական կոսէկով ծախսեց : — Ո՞րքան փող ստացաւ նա բոլոր կաթսաներէն :

977. Խողթատարական ծանապարհին երկարութիւնը 400 վերսի հասուցանելու համար 1 տարի 4 ամիս աշխատուեցաւ . իւրաքանչիւր օր 15 վերսա և 240 ձողաչափ յառաջանալով . իսկ մնացեալ ծանապարհին շինութիւնը 32 շաբաթէն աւարտեցաւ . — Ի՞նչ երկարութեամբ ծանապարհ շինուած եղաւ այս վերջի եօթնեկաց իւրաքանչիւրին մէջ :

978. Վրառատուննեինը ձողաչափ և 2 կանգուն երկարութիւն ունեցող բակի մը մէջ՝ դասարանի մը աշակերտները զբուժնելու նպատակաւ հետևեալ կերպիւ կարգի շարեցին : Աւթը աղայքը՝ մէկդմէկէ 3 ձողաչափ 2 կանգուն և 12 վերշոկի հեռաւորութիւն ունեցող միջոցի մը մէջ կանգնեցուցին . յետոյ 5 աշակերտ՝ 2 ձողաչափ 1 կանգուն և 9 վերշոկի իրարմէ հեռաւորութեան մէջ . 4 աշակերտ՝ 1 ձողաչափ 2 կանգուն և 11 վերշոկ միջոցի մէջ . իսկ մնացեալները՝ դարձեալ իրարմէ

2 կանգուն և 1-ական վերշոկ միջոցի մէջ : — Վրանի<sup>9</sup> էր այս դրութեամբ կարգի կանգնող աշակերտաց թիւը :

979. Գործարանի մը պիտոյիցը համար 18 պարկ ալիւր գնուած է , ամեն մէկուն մէջ 3 փունթ և 12 ֆունթ պարունակած լինելով , զոր 4 շարաթ ի գործ դրին օրական 1 փունթ և 16 ֆունթ ի գործ դնելով . իսկ մնացեալ ալիւրը հարկաւոր չը լինելուն պատճառաւ՝ ֆունթը 30 կոսէկով ծախսեցին : — Ո՞րքան փող ստացուեցաւ մնացեալ ալիւրին համար :

980. Օխնուորաց համար 18 ծրար չուխայ գնուեցաւ , ամեն մէկը 38 կանգուն և 2 վերշոկ ունենալով , և նոցանէ 85 վերարկու կարուեցաւ , ամեն մէկուն համար 3 կանգուն և 12 վերշոկ չուխայ գործածելով , և 56 հատ ևս կրնավերարկու : — Ո՞րքան չուխայ ի գործ դրուած եղաւ . այս երկրորդ տեսակ զգեստին ամեն մէկուն համար :

981. Վառողարանի մը մէջ 1,491 փունթ և 30 ֆունթ վառօդ պատրաստուած է , զորս տակառիկներու մէջ լուցին : — Ինը հարիւր տասնեռութը փունթ 72 տակառիկներու մէջ պարունակուեցաւ : — Քանի<sup>9</sup> դեռ այսպիսի տակառիկ պէտք է մնացեալ վառօդը նոցա մէջ լիցնելու համար :

982. Ուսումնարանի մը աշակերտուհեացը համար 475 կանգուն չուխայ գնուեցաւ . յորոց 346 կանգուն և 12 վերշոկը 73 զյոդ շրջազգեաներու (պլատե) համար գործածուեցաւ : — Վրանի<sup>9</sup> զյոդ դեռ այս տեսակ շրջազգեաներ կարելի է շինել մնացեալ չուխայէն :

983. Ճարիւր օրուայ միջոցին մէջ՝ շողենաւ մը 7,840 վերսա ծանապարհ կարեց . իսկ նաւապետը այնպէս կը հաշուէր՝ որ եթէ միեւնոյն արագութեամբ ծանապարհը շարունակելու լինի՝ 60 օրէն գնալու տեղը կը համեն : — Ի՞նչքան

երկարութիւն ունի այդ ամբաղջ ճանապարհը՝ զոր անպատճառ շոգենաւով անցնել պէտք է:

**984.** Երծաթագործը 4 ֆունթ և 14 լոտ արծաթէն 1 երկոտասանեակ բաժակ՝ և 1 երկոտասանեակ ևս սեղանի դրաւ շինեց: — Ո՞րքան է բաժակին ծանրութիւնը, եթէ ամեն մէկ դրալին քաշն է 5 լոտ և 2 զօլոտնիկ:

**985.** Երեսունեւից սայլի վասյ 288 չետվերիկ գարի բեռցուած էր, ամեն մէկ չետվերիկին քաշը 33 ֆունթ լինելով: — Քանիկա՞ն փութ գարի բեռնաւորած էին ամեն մէկ սայլին մէջ:

**986.** Երկու վաճառական իրարու չեա ապրանք փոխանակեցին: Կոցանէ մէկը միւսին 12 փութ և 15 ֆունթ շաքար առաջարկեց, փութը՝ 7 մանէթ 20 կոպ գնահատելով. իսկ միւսը նորա փոխարէն կոտաւ, կանդունին 18 կոպ գին դնելով: — Քանի՞ ծրար կոտաւ առաջ կը պարսաւորի երկրորդը, եթէ ամեն մէկ ծրարը 45-ական կանգուն կոտաէ բաղկացած է:

**987.** Երկու վաճառական իրարու չեա ապրանք փոխանակել կամեցան: Ո՞էկը առաջարկեց 12 ծրար չուխայ ընդունել, ամեն մէկը 36 կանգուն և 12 վերշոկ ունենալով, և կանգունը 4 մանէթ 80 կոպ. գնահատելով, իսկ միւսը նորա փոխարէն թէյ, ֆունթը 2 մանէթ 40 կոպ. արժեցներով: — Ո՞րքան չայ պիտի տայ երկրորդ վաճառականը առաջնոյն:

**988.** Կալուածատէր մը 520 չետվերա և 4 չետվերիկ գարի ունէր. Իւր ձեսը համար ամբաղջ տարաւան մէջ ամսական 14 չետվերա 5 չետվերիկ և 6 գարնեց գարի վասնեց. 280 չետվերա ծախեց. իսկ մնացեալ յանելով՝ 1-ին 7 հունձք ստացաւ: — Ի՞նչքան գարի հաւաքած եղաւ նա:

**989.** Պղնձագործը 4 կտոր պղինձ հալեցուց, որոց ամեն մէկուն քաշն էր 2 ֆունթ, 19 լոտ և 1 զօլոտնիկ, և գո-

5 կտոր ևս, 4 ֆունթ, 16 լոտ և 2 ական զօլոտնիկնոց. և այս պղինձներէն կանդեցներ շինեց, ամեն մէկուն 3 ֆունթ 9 լոտ և 3 զօլոտնիկ ծանրութիւն առաջ: — Քանի՞ կանդել շինուեցաւ:

**990.** Ելիւրավաճառի մը խանութը 12 խսիր հաճարի ալեր, և 16 խսիր ևս ցորենի ալեւր բերին, ընդ ամենը 161 փութ և 32 ֆունթ ծանրութիւն ունենալով: — Ի՞նչքան կը կշռէ հաճարի ալեւրին խսիրը, եթէ ցորենի ալեւրինը, 5 փութ 12 ֆունթ և 10 լոտ կը կշռէ:

**991.** Շոգենաւը 8 ժամուան մէջ 141 վերստ և 276 ձողաչափ կը յառաջանայ. իսկ առագաստաւոր նաւը այս տարածութիւնը միայն 18 ժամուան մէջ անցնել կարող է: — Ո՞րքան տեղ շոգենաւը՝ 24 ժամուան մէջ՝ առագաստաւոր նաւէն յառաջ անցնել կը կարողանայ, եթէ նորա երկուքն ալ միւնոյն ժամանակուան մէջ նաւահանգիստէն ճանապարհ ելնելու լինին:

**992.** Գործարանի մը գործաւորները կերակրելու համար՝ 18 խսիր ալեւր գնուեցաւ, ամեն մէկը 6 փութ և 24 ֆունթ կշռող: — Ո՞րքան ալեւր կը մնայ 6 շաբաթ անցնելէն յետոյ, եթէ հանապազօրեայ 34 ֆունթ 16 լոտ և 2 զօլոտնիկ ալեւր ուտուելու լինի:

**993.** Վաղաքային լուսաւորութեան համար վառելաիւց գնուեցաւ. տասներկու տական, ամեն մէկուն մէջ 9-ական փութ 12 ֆունթ և 7 լոտ գտնուելով. 18 տական 10-ական փութնոց 15 ֆունթնոց և 19-ական լոտնոց, և գեռ 24 տական 8-ական փութ 30 ֆունթ և 24 լոտնոց: Ըստ վառելաիւղերը հաւասար մէծութեամբ 65 տականաց մէջ լրին: — Ի՞նչ քանակութեամբ իւղ ուրարունակեց ամեն մէկը:

**994.** Երեսունեօթը ձողաչափ 5 ոտնաչափ և 8 բթաչափ երկարութիւն ունեցող չուանի մը կտորէն, 11 ձողաչափ

և 4 բթաշափ կտրեցին . իսկ մնացեալ չուանը հաւասար կը-  
տորնելու կտրեցին , ամեն մէկը 3 ձողաշափ և ոտնաշափ և 5  
բթաշափ լինելով : — Քանի՞ կտոր այսափ երկարութեամբ  
չուանի կտորներ ստացան :

**995.** Երեք արծաթեայ հին ջահեր կար , որոց ամեն  
մէկը 6 ֆունթ և 15 լոտ ծանլութիւն ունէր : Աղքա իրը  
մաշուսիծ և անպիտանացած առարկաներ , 465 մանէթ և 75  
կոպէկի ծախուեցան : — Քանի՞ գնահատուեցու այդ արծա-  
թին ֆունթը :

**996.** Քսան կանգուն երկարութեամբ հեռագրական եր-  
կաթաթելը՝ 1 ֆունթ 12 ֆունթ և 16 լոտ կը կշռէ : —  
Ո՞րքան պիտի կշռէ , 1 վերստ 206 ձողաշափ և 2 կանգուն  
տարածութեան վրայ ձգուած երկաթաթելն ծանրութիւնը :

**997.** Իեռնաբարձ շոգեկառքի մը մէջ 261 ֆունթ և 25  
ֆունթ ծանրութիւն զրին : Եյս բեռք հակերէ (ՏՅՕԿԵ) բաղ-  
կացած էր . նոցանէ 26 հասար 8-ական ֆունթ , 30 ֆունթ , 21  
լոտ և 1 զօլոսնիկ կը կշռէին . իսկ մնացեալներէն ամեն մէկը  
2 ֆունթ , 4 ֆունթ , 7 լոտ և 1 զօլոսնիկ : — Քանի՞ էր բո-  
վանդակ հակերուն թիւը :

**998.** Իեռնաբարձ շոգեկառաց գնացքը , առանց դադար  
առնելու , 1 ժամուան և 4 վայրկենի մէջ 22 վերստ և 264  
ձողաշափ տեղ կը յառաջանայ : — Խնչքան ժամանակէն 4  
մլոն 5 վերստ և 396 ձողաշափ հեռաւորութիւն ունեցող  
կայարանը կը հասնի , եթէ ժանապարհին 43 վայրկեան կանգ-  
նելու լինի :

**999.** Շտեմարան մը բերուած 48 տակառ շաքարը՝ բո-  
լորը միասին 91 բերկովէց , 9 ֆունթ 30 ֆունթ և 30 լոտ  
կշռեց : Նոցանէ 23 տակառը՝ 20 ֆունթ և 10 տական ֆունթ  
կշռեցին : — Ո՞րքան շաքար կար մնացեալ ամեն մէկ տակա-  
ռաց մէջ՝ եթէ համահաւասար էր քաշերը :

**1000.** Պետերբուրգէն մինչև Մոսկով 600 վերստի տա-  
րածութիւն կայ : Իեռնաբարձ կառաց գնացքը 1 ժամուան  
և 45 վայրկենի մէջ 24 ական վերստ յառաջացաւ , և եօթն  
անգամ 1 ժամ և 25 վայրկեան տևողութեամբ դադար ա-  
ռաւ : — Ո՞րքան ժամանակէն այդ գնացքը այս մայրաքաղաքէն  
միւսը հասաւ :

**1001.** Շանսապարհորդ մը 192 վերստ ճանապարհ արաւ ,  
ամեն մէկ վերստը 1 ժամուան և 45 վայրկենի մէջ կտրելով  
և 9 կայարանաց մէջ հանդիսա առնելով՝ 1 ժամ և 14 վայր-  
կեան տևողութեամբ : — Ո՞րքան ժամանակ ճանապարհին հան-  
գրստութիւն առած եղաւ :

**1002.** Երծաթագործը՝ 30 ֆունթ և 16 լոտ արծա-  
թէն՝ 1 երկոտասանեակ գաւաթ շինեց , ամեն մէկուն 18 լոտ  
և 2 զօլոսնիկ ծանրութիւն տալով . 1 երկոտասանեակ ևս  
դրաւ , ամեն մէկը 13 լոտ և 1 զօլոսնիկ կշռելով . իսկ մնա-  
ցեալ արծաթէն՝ աշտանակներ , ամեն մէկը 24 լոտ և 3 զօ-  
լոսնիկ ծանրութեամբ : — Ի՞նչքան փող ձեռք բերաւ նա  
ամեն մէկ աշտանակէն՝ ամենը մէկանց 561 մանէթ և 60  
կոպէկի ծախելով :

**1003.** Յիսունեութ կանգուն և 8 վերշոկ ժապաւէնէն  
կանանց վերաբերեալ զարդեր շինուեցաւ , ամեն մէկուն հա-  
մար 2 կանգուն և 7 վերշոկ ի գործ դրուելով , և այս զար-  
դերէն ամեն մէկը 5 մանէթ 80 կոպէկով ծախուեցաւ : —  
Ո՞րքան շահ ձեռք բերուեցաւ , եթէ ժապաւէնէն 1 կանգունը  
1 մանէթ 92 կոպ . կարժէր :

**1004.** Հինգ ֆունթ և 20 ֆունթ պղնձէն , արշեստա-  
ւորը ինքնաեռներ շինեց , ամեն մէկուն 24 ֆունթ ծանրու-  
թիւն տալով , և նոցանէ ամեն մէկը 8 մանէթ 80 կոպէկով  
ծախեց : — Ո՞րքան ստացաւ ամբողջ ինքնաեռաց շինութեանը

համար, թէ որ պղնձին փութը 10 մանեթ 80. կոտ կը գնահատուի:

**1005.** Երշեստաւորի մը քով 16 ֆունթ 16 լօտ և 2 զօլոտնիկ արծաթ կար. յորմէ 6 ֆունթ 24 լօտ և 2 զօլոտնիկը առնելով՝ 25 հատ գաւաթ շինեց: — Քանի՞ նմանապիսի գաւաթներ կը շինուի գեռ մնացեալ արծաթէն:

**1006.** Կապալառուին մէկը 12 մղճն և 5 վերաստարածութեան վրայ զրուելու հեռազբաթելի մը, սոյնպէս և 58 մղճն տարածութեան վրայ հասաստուելու մէկ ուրիշ հեռազբաթելի մը շինութիւնը յանձն առաւ: — Ի՞նչքան պիտի ստանայ երկրորդին շինութեանը համար, եթէ առաջնոյն շինութեանը համար 10,502 մանեթ վճարած են:

**1007.** Խանութի մը մէջ 11 փութ և 19 ֆունթ վառելախւղ պարունակող տակառ մը կար: Եյս իւղէն ճական փունթ և 20. ական լօտ պարունակող 48 շիշերու մէջ լցուցին, և փունթը 15. ական կոպէկով ծախեցին: Խակ մնացեալ իւղը աւելի փոքրիկ սրուակներու (օօշու) մէջ լցուցին, որոց ամեն մէկը 3 ֆունթ և 12 լօտ կը պարունակէր, և ամեն մէկ սրուակը 54. ական կոպէկով ծախեցին: — Ո՞րքան փող ստացուեցաւ ամբողջ վառելախւղէն:

**1008.** Գործարանի մը համար 9 փութ և 24 ֆունթ շաքար գնուած էր, ամեն մէկ փութին 8 մանեթ 40 կոպ վճարելով: Եյս շաքարէն իւրաքանչիւր օր 16. ական փունթի գործ կը դրուէր: Այց օր անցնելէն զկնի նկատեցին որ յեշեալ շաքարը ընտիր տեսակէ չէր, հետեաբար մնացեալ քանակութիւնը յետ ուղարկեցին: — Ո՞րքան փող յետ պիտի ստացուի:

**1009.** Տասնեեօթը վերստ տարածութիւն ունեցող ճառապարհ մը նորոգութեան կարօտ էր: Առաջին շաբաթը

գործառներ 2 վերստ և 316 ձողաչափ տեղ աշխատեցան: Երկրորդ շաբաթը՝ 3 վերստ և 128 ձողաչափ: Երրորդ շաբաթը՝ 3 վերստ և 378 ձողաչափ: Խակ մնացեալ արածութիւնը 5-դ շաբաթը աւարտեցին: — Ո՞րքան ստացան նոքա հինգերորդ շաբաթուայ մէջ աշխատածնուն համար, եթր 1 վերստ տեղի նորոգութեանը համար 30 մանեթ վճարուեցաւ:

**1010.** Տակառաց մէջ լցուած 20 փութ սուրճ շոկենաւ բերուեցաւ: «Եոյանէ մէկուն մէջ 4 փութ և 18 ֆունթ կար. Երկրորդին մէջ՝ 3 փութ, 17 ֆունթ և 19 լօտ. Երրորդին մէջ՝ 5 փութ, 15 ֆունթ և 17 լօտ. Հորրորդին մէջ՝ 3 փութ, 9 ֆունթ և 12 լօտ. Խակ մնացեալ սուրճը հինգերորդ տակառին մէջ լցուած էր, զոր անզգուշաբար ձեռքէն թողնելով ջուրն ընկաւ և փճացաւ: — Ո՞րքան վաս կրեց այս սորձերուն տէրը, եթէ նոյանէ փութը 19 մանեթ և 20 կոպ. գնահատուած էր:

**1011.** Վաճառտիկան մը՝ ամեն մէկը 28. ական կանգունէ բագկացիալ 15 ծրար չուխայ ունէր: Այցա մէկ մասը 749 մանեթով ծախեց, և իրեն քով գեռ 232 կանգուն և 12 միջոկ չուխայ մնաց: — Քանի՞ վաճառած եղաւ այս չուխային կանգունը:

**1012.** Չուլարանի մը մէջ 20 թնդանօթ շինուեցաւ, ամեն մէկուն 56 թերկովէց, 7 փութ և 20 ֆունթ ծանրութիւն արուելով: «Եոյանէ 9 հատը կշռելով ծախուեցու, 1 փութ աղնձին համար 19 մանեթ և 60 կոպ. ստանարվ: — Ո՞րքան փող առնուեցաւ, եթէ ամեն մէկ թնդանօթի շինողէքի համար՝ զեռ 50. ական մանեթ 60 կոպ. ստացուեցաւ:

**1013.** Երուեաստորը 12 երկաթէաց կաթսաներ պատրաստեց: ամենքը մէկանց 16 փութ և 32 ֆունթ ծանրութիւնը առաջանաւ:

թիւն ունենալով։ “Եղանէ ՚ հատը նա ծախեց, երկաթին ամեն մէկ փութին համար 6 մանէթ 40 կոպ. առնելով, իսկ ամեն մէկ կաթսային ևս շինողչէր 4 մանէթ 50 կոպ. ստացաւ։ — Ո՞րքան փող ձեռք բերաւ նա ծախած ՚ կաթսանելուն համար։

**1014.** Վաճառականի մը քով 3 տեսակ բրդեղէն ազանելիք կար։ Մէկ տեսակէն 6 ծրար քանակութեամբ, ամեն մէկը 72 կանգուն և 10 վերշոկ պարունակելով։ միւսէն 12 ծրար՝ ամեն մէկը 64 կանգուն և 8 վերշոկ։ և երրորդ տեսակէն՝ 1 ծրար, 29 կանգուն և 4 վերշոկ։ Եյս ապրանքը նա չուխայի հետ փոխանակեց, ամեն մէկ 4 կանգուն բրդեղէնին փոխարէն 1 կանգուն չուխայ ընդունելով։ — Ի՞նչքան չուխայ ընդունած եղաւ։

**1015.** Խանութի մը մէջ 16 պարկ ընկոյզ կար, ամեն մէկուն մէջ 2 փութ և 15 փունթ լինելով, և այս ընկոյզներուն փութը 5 մանէթ 60 կոպէկով ծախեցին։ — Ո՞րքան շահ ձեռք բերուեցաւ, եթէ այս ընկուներուն պարկը 10 մանէթ և 40 կոպ. արժած էր խանութպանին։

**1016.** Վաճառականին մէկը, ամեն մէկը 69 մանէթ և 40 կոպէկով 12 հատ արծաթեայ հին կանգեղներ գնեց, և այս գնուած արծաթեղէն առարկայից ամեն մէկ փունթը 25 մանէթ 60 կոպէկով ծախեց։ — Ո՞րքան շահեցաւ նա, եթէ ամեն մէկ կանգեղին ծանրութիւնն էր 3 փունթ և 15 լոտ։

**1017.** Երշեստաւորը՝ 4 փութ 13 փունթ և 8 լոտ պղընձէն կաթսաներ շինեց, ամեն մէկ հատին 5 փունթ և 8 լոտ ծանրութիւն տալով, և նոցա ամեն մէկը 4 մանէթ 32 կոպէկով ծախեց։ — Ո՞րքան ստացաւ աշխատութեան համար, եթէ պղնձին փունթը նորա 52 կոպէկի նստած էր։

**1018.** Չորս փութ կապարէն գնուակներ շինուեցան ամեն մէկը 6 լոտ և 2 զօլոսնիկ կշռելով, և բոլոր զինուորաց

մէկ մէկ երկոտասանեակ բաժանուեցան։ — Քանի՞ զինուորաց բաժանուեցան այդ գնուակները։

**1019.** Կալուածատէր մը իւր դաշտերէն 4,095 փութ խոտ հնձեց, յորոց 156 մանէթի տուաւ հնձողաց, երեք փութ 10 փունթը 1 մանէթի գնահատելով՝ 23 սայլ նորանէ ծախեց, ամեն մէկուն մէջ 16 փութ և 15 փունթ լինելով։ իսկ դաշտերուն մէջ գեռ 115 խուրձ (ՀՈՊԵ) խոտ մնաց։ — Ի՞նչ քանակութեամբ խոտ կը պարունակէր այս մնացեաւ խուրձերուն ամեն մէկը։

**1020.** Տօնավաճառի մէջ վաճառական մը 12 փութ թէյ գնեց, փունթը 1 մանէթ 80 կոպէկով, և զանոնք մինչեւ իւր բնակած քաղաքը փոխազրել տալու համար՝ ամեն մէկ փութին 4 մանէթ 60 կոպ. վճարեց։ Եյս թէյերէն 1 փութ և 12 փունթը փճանալով՝ ծախուելու յարմար չեղան. իսկ մնացեալները 215 մանէթ շահով ծախուեցան։ — Քանի՞ով վաճառուած եղաւ այս թէյին փունթը։

**1021.** Շուքի միջոցաւ՝ զանգակատան մը բարձրութիւնը չափել կը կամենան։ Եյս նպատակաւ նորա մօտակայքը 4 կանգուն և 12 վերշոկ երկարութեամբ գաւազան մը ցցեցին նկատեցին որ իրմէ ՚ ձողաչափ, երկու կանգուն և 12 վերշոկ երկարութեամբ շուք կը ձգէր։ իսկ նոյն ժամանակը զանգակատունը 110 ձողաչափ, 2 կանգուն և 8 վերշոկ շուք կարձակէր։ — Ի՞նչքան էր զանգակատանը բարձրութիւնը։

**1022.** Երկաթուղոյ մը գնացքը՝ առաջուան ժամանակաց մէջ՝ 2 օրուայ և 2 ժամնեայ մէջ մէկ քաղաքէն միւսը կանցնէր. իսկ ներկայ ժամանակս՝ միենոյն միջոցը՝ 40 ժամուան մէջ կը կարուի. բայց ամեն մէկ ժամը առաջուայ գընացքէն 4 վերսա և 100 ձողաչափով աւելի արագ կերթայ։ — Ի՞նչքան է այս երկու քաղաքաց մէջի տարածութիւնը։

**1023.** Պղնձագործը իւր քովլ ունեցած պղնձէն 12 ինքնաեռ շինել կամեցաւ. բայց յետոյ հաշուելով տեսաւ որ 18 հատ կաթսայ շինելը աւելի շահաւոր պիտի լինէր իրեն։ — Ի՞նչքան պղնձն ունէր նա, եթէ յայտնի է, որ ամեն մեկ կաթսան թեթևաքաշ ելաւ։

**1024.** Պետերբուդ քաղաքը 1,703 թուականին շինուեցաւ։ — Քանի՛ տարի անցել է նորա շինութենէն մինչեւ ներկայ թուական։

**1025.** Կրիստոսի Տեառն մերոյ ծննդենէն 988 տարի անցնելէն յետոյ՝ քրիստոնէական հաւատը Ոտոսաստանի մէջ տարածուեցաւ։ — Քանի՛ տարի անցած է մինչեւ ներկայ թուական։

**1026.** Կապօլէոն Ա-ը 1768 թուականին՝ Օդրոսոսի 16-ին ծնաւ. իսկ 1804 թուակ. Մայիսի 18-ին Գաղղրոյ գահը բարձրացաւ։ — Իւր ծննդենէն քանի՛ տարի յետոյ այդ ազգին թագաւորական գահը նստաւ։

**1027.** Գաղղիացիք 1812 թ. Աեպամբերի 2-ին Մասկովի վրայ արշաւեցին. իսկ Ոտոսը՝ 1814 թ. Մարտի 19 Փարիզ դիմեցին։ — Քանի՛ տարի անցաւ այս երկու եղելութեանց մէջ, և ի՞նչքան ժամանակ եղաւ, մինչեւ մեր օրը՝ սոցա ամեն մէկուն մէջ անցած միջոցը։

**1028.** Մեծն Պետրոս՝ Ոտոսաց կայսրը 1672 թուականին ծնաւ. իսկ Ազեքսանդր Ա. ինքնակալը 1778-ին։ — Քանի՛ տարի անցաւ նոյն երկու քին ծննդեանը միջոցին մէջ։

**1029.** Կասարինէ Բ. Ոտոսաց կայսրուհին՝ իւր 34 տարեկան, 2 ամսուան և 7 օրուան հասակին՝ 1762 թուականին Յունիսի 28-ին գահ բարձրացաւ. իսկ 68 տարեկան, 6 ամսուան և 15 օրուան հասակին վախճանեցաւ։ — Ո՞ր թուականին ծնաւ այս կայսրուհին, և ո՞ր թ. վախճանեցաւ։

**1030.** Շանապարհորդին մէկը 1867 թուականին, Մայիսի 15-ին՝ և երեկոյեան 5-դ ժամը 30 վայրկեան անցած Պետերբուրգէն արտասահման երթալու ճանապարհ ելաւ. իսկ 1870-ին, Հոկտեմբերի 28-ին՝ առաւօտեան 10-դ ժամը 40 վայրկեան անցած՝ յետ վերադարձաւ։ — Ո՞րքան ժամանակ անցուցած եղաւ նա ճանապարհորդութեան մէջ։

**1031.** Ոտոսաց Մեծն Պետրոս Կայսրը 1672 թուականին, Մայիսի 30-ին ծնաւ. իսկ 1725-ին, Յունվարի 28-ին վախճանեցաւ։ — Քանի՛ տարիէն Մեծն Պետրոս իւր ծննդենէն յետոյ վախճանեցաւ։

**1032.** Ինքնակալ Ազեքսանդր Ա-ը 1801-ին Մարտի 12-ին կայսերական գահը բարձրացաւ, և 24 տարի, 8 ամիս և 7-ին օր թագաւորեց։ — Քանի՛ երրորդ տարուան մէջ, և որ թուականին վախճանեցաւ նա։

Վերջ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՆ



**ՕՐԻՆԱԿՑ ԹՈՒԱՐԿՈՒԹԵԱՆՑ.**

1. ԳՈՒՄԱՐԵԼ:  $489 + 567 + 375 + 743$ .

2.  $587 + 349 + 86 + 258 + 405$ .

3.  $8,056 + 3,928 + 964 + 8,396 + 748 + 1,275$ .

4.  $45,827 + 57,495 + 73,649 + 5,908 + 49,886$ .

5.  $58,647 + 368,429 + 176,078 + 375,696 + 20,150$ .

6.  $7,604,827 + 396,725 + 8,963,427 + 6,298,974 + 16,736,047$ .

8. ԳՈՒՄԱՐԵԼ. Հետեւեաները: Հինգ միլիոն եօթանասունը վեց հազար չորս հարիւր ութը: Երեսունը վեց միլիոն հինգ հարիւր հազար երեք հարիւր իննասունը վեց վեց հազար չորս հարիւր յիսունը վեց միլիոն եօթանասունը հինգ հազար եօթն հարիւր քառասուն: Աւթը հազար եօթը միլիոն ինը հազար եօթը: Քառասունը եօթը հազար յիսունը վեց:

7. ԳՈՒՄԱՐԵԼ: Հինգ հարիւր ութը: Հազար եօթը հարիւր ինը: Հինգ հազար վեց: Երեսունը ութը հազար իննասուն երկու: Ինը հազար չորս հարիւր ութը:

|    |           |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |
|----|-----------|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 9. | ԳՈՒՄԱՐԵԼ: | 3 | 7 | 8 | 2 | 0 | 9 | 6 | 4 | 3 | 2 | 8 | 7 |
|    |           | 9 | 6 | 7 | 0 | 6 | 3 | 4 | 5 | 7 | 8 | 9 | 4 |
|    |           |   | 7 | 2 | 6 | 3 | 4 | 9 | 9 | 9 | 6 | 7 | 8 |
|    |           |   | 5 | 7 | 4 | 8 | 8 | 6 | 3 | 4 | 9 | 7 |   |
|    |           |   |   | 8 | 2 | 6 | 3 | 4 | 4 | 4 | 7 | 0 | 9 |
|    |           |   |   |   | 5 | 7 | 6 | 4 | 9 | 7 | 8 | 6 | 4 |
|    |           |   |   |   |   | 9 | 7 | 1 | 8 | 2 | 6 | 3 | 4 |
|    |           |   |   |   |   |   | 8 | 2 | 3 | 6 | 7 | 5 | 4 |
|    |           |   |   |   |   |   |   | 9 | 7 | 2 | 0 | 6 | 5 |
|    |           |   |   |   |   |   |   |   | 7 | 3 | 6 | 5 | 4 |
|    |           |   |   |   |   |   |   |   |   | 8 | 9 | 7 |   |

10. ՀԱՅՈՒՄՆ ԿԱՐ ԲԱՐՁՈՒՄՆ:  $72 - 48$ . 16. 2,000 — 854.

11.  $346 - 234$ .

12.  $482 - 365$ .

13.  $508 - 234$ .

14.  $780 - 487$ .

15.  $1,100 - 756$ .

21. Քաներել հազար եօթը հարիւր չորս թիւն, հանել տանեինը հազար: Եօթանասունը վեց:

22. Երեք հազար քառար վեց միլիոն չորս հազար երկու հարիւր եօթը թիւն հանել հինգ հարիւր ութը միլիոն եօթանասունը հինգ հազար իննասունը չորս:

23. 5 հազար միլիոնն հանել 4,989,506,792-ը:

24. ԲԱԶՄԱՊԱՏԿԵԼ:  $36 \times 8$ .

25.  $128 \times 40$ .

26.  $360 \times 70$ .

27.  $427 \times 12$ .

28.  $308 \times 37$ .

29.  $485 \times 276$ .

30.  $536 \times 234$ .

31.  $1,256 \times 609$ .

32.  $7,428 \times 507$ .

33.  $87,054 \times 860$ .

34.  $72,600 \times 490$ .

35.  $405,250 \times 5,080$ .

36.  $890,625 \times 384$ .

37.  $748 \times 748$ .

38.  $24 \times 24 \times 24$ .

39.  $625 \times 625 \times 625$ .

40.  $5,027 \times 5,027$ .

41.  $60,008 \times 60,008$ .

42. ԲԱԺԱՆԵԼ:  $84 \times 12 \cdot 6$  Վայ.

43.  $256 : 32$ .

44.  $7,992 : 54$ .

45.  $11,868 : 188$ .

46.  $27,208 : 358$ .

47.  $187,563 : 607$ .

48.  $281,624 : 749$ .

49.  $1,924,916 : 4,508$ .

50.  $3,750,264 : 8,924$ .

51.  $71,560,000 : 7,527$ .

52.  $74,567,624 : 9,500$ .

53.  $462,833,934 : 3,278$ .

54.  $41,028,000 : 7,800$ .

55.  $(456 + 7,082 + 8,964 + 728) \times 378$ .

56.  $(54,768 - 53,829) \times 408 + (77,111 \times 8)$ .

57.  $(45,687 + 33,885) : 349 + (8,359 \times 108)$ .

58.  $(202,032 : 549) - (178,480 : 485)$ .

59.  $(318,860 : 428) - (7,283 - 6,539)$ .

60.  $(666 \times 555) - 444 \times 777$ .

61.  $\{(148 \times 54) + (5,124 : 12)\} - \{(5,120 : 128) + (126 \times 37)\}$ .

62. Տրուած է 2 գումարելի թիւն. 45,698, 7,379 և 94,600 գումարը: Գանել երրորդ գումարելի թիւը:

63. Տրուած է 3 գումարելի թիւն. 58,649, 76,537 և 9,999 և 800,000 գումարը: Գանել երրորդ գումարելի թիւը:

64. Գումարելի թուոց գումարը 5 միլիոնի հաւասար է: Գումարելի թուոցն մէկը 884,570 թուին հաւասար է. խել բալոր միւս մացեալներն ևս՝ իրենց մէջ հաւասար թիւն: Անընդ մացեալ ամեն մէկ գումարելիներուն մեծութիւնը:

65. Առաջարկուած է 3 գումարելի թիւն. 76,896, 52,384 և 79,368 և 242,424 գումարը: Գանել մացեալ իրենց մէջ չորս հաւասար գումարելիները:

66. Տրուած է նուազել 72,000 և նուազական 56,048: Գանել մացորդը:

67. Տրուած է 546,727 հանելի թիւը, և 98,989 նորա տարրերութիւնը: Գանել նուազելի թիւը:

68. Տրուած է տարրերութիւն՝ 58,496 թիւը, և 269,507 նուազելին: Գանել նուազական կամ հանելի թիւը:

69. Նուազելի թիւը 735 միլիոնի հաւասար է. խել տարրերութիւնը՝ հանելի թիւն 456,735-ով աւելի է: Անընդ մացեալ ամացերողի 497,258 թուոցն հաւասար: Գանել արրերութիւնը:

70. Նուազելի թիւը տարրերութեանը՝ 827,046 թուոցն հաւասար է. խել բազմապատկելի՝ 4,736 թիւը: Գանել արրերութիւնը:

71. Բազմապատկելին 27,565 թիւն է. խել բազմապատկելի՝ 4,736 թիւը: Գանել արրաջարկուածը:

72. Բազմապատկելին 56,486 թիւն է . իսկ արտադրեալը 21,351,708 թիւը : Գլուխութեալը բազմապատկելու:

73. 876 թիւը բազմապատկելին է . իսկ արտադրեալը 7,467,024 թիւը : Գանել բազմապատկելի թիւը :

74. Բազմապատկելը 1,125 թիւն է . իսկ արտադրեալը 9,000,000 թիւը : Գանել բազմապատկելու:

75. Երկու թուոց արտադրեալն 7,574 թիւը հանելով՝ հաւասարէ 9,960,426-ի . իսկ բազմապատկելաց մէջն է 3,560 թիւը : — Ո՞քան է երկրորդ բազմապատկելը :

76. Բաժանելին 3,313,572 թիւն է . իսկ բաժանաբարեն է 439 թիւը : Գանել բանորդը :

77. Բաժանելին 4,741,650 թիւն է . իսկ քանորդն է 6,425 թիւը : Գանել բաժանաբարը :

78. Բաժանաբարը 875 թիւն է , քանորդը 4,937 թիւը , եւ մացորդն եւս 779 թիւը : Գանել բաժանելին :

79. Բաժանելին 5,993,268 թիւն է , քանորդը 7,529 . իսկ մացորդը 181 : Գրանել բաժանաբարը :

80. Բաժանաբարը 875 թիւն է , քանորդը 4,937 . մացորդը 779 : Գանել բաժանելին :

81. Բաժանելին 45,927,480 թիւն է , քանորդը 12,843 . իսկ մացորդը 912 : Գանել բաժանաբարը :

82. Բաժանանմանէն մացորդը 608 թիւն է , բաժանաբարը 7,368 . իսկ քանորդը 569 : — Ո՞քան է բաժանելի թիւը :

83. Բաժանելին 53,890,426 թիւն է , բաժանաբարը 6,578 . իսկ մացորդը 8,450 : Գանել քանորդը .

84. Բաժանելին 60 միլիոնի հաւասար է , բաժանաբարը 898-ի . իսկ քանորդը 66,815 թուոցն : Գանել մացորդը :

85. Ո՞քան կատացուի , եթէ 560 թիւը՝ իսկն իւր վրայ անգամ բազմապատկելու լինիք :

86. Քանի անգամ կարելի է 380,078 միլիոն 125 հազարը հետզետէ բաժանել 7,250 թուոցն վրայ :

87. 4,260 եւ 528 թուոց արտադրեալն հանել նոցա գումարը , եւ սոտցուած թիւը՝ վերոյիշեալ թուոց տարբերութեանը վրայ բաժանել :

88. 546 թուոցն վրայ անցայ թուոց մը բազմապատկուելն 21,210 թիւը արտադրեալ սոտցուեցաւ : — Ի՞նչպիսի երկու թուեր իրարու հետ բազմապատկել պէտք է , որպէս զի արտադրեալը 240 անգամ աւելի սոտցուել :

89. Թուոց մը 540-ով բաժանանմանէն 7,200 քանորդ թիւը սոտցուեցաւ : — Ի՞նչպիսի թիւ նոյն բաժանաբարին վրայ բաժանել պէտք է , որպէս զի քանորդը 100 անգամով պակս սոտցուել :

3 - 9 m<sup>2</sup> " - " S m<sup>2</sup> 12 F " - " J<sup>2</sup>.

ՔԱԿՏՈՒՄՆ Թ.ՌԵ.08.

$$\begin{aligned}
 12 &= 1 + 1 + 1 + 1 + 1 + 1 + 1 = 1 \times 12 \\
 12 &= 2 + 2 + 2 + 2 + 2 + 2 = 2 \times 6 \\
 12 &= 3 + 3 + 3 + 3 = 3 \times 4 \\
 12 &= 4 + 4 + 4 = 4 \times 3 \\
 12 &= 5 + 5 + 2 = 5 \times 2 + 2 \\
 12 &= 6 + 6 = 6 \times 2 \\
 12 &= 7 + 5 \\
 12 &= 8 + 4 \\
 12 &= 9 + 3 \\
 12 &= 10 + 2 \\
 12 &= 11 + 1
 \end{aligned}$$

ՀԱՅՈՒՄՆԻ ԿԱՄ ԲԱԴՐԱՑՈՒՄՆ 4-ՆԴ

$$\begin{array}{ll}
 4 + 4 + 4 = 12 & 5 + 5 + 2 = 12 \\
 4 \times 3 = 12 & 5 \times 2 + 2 = 12 \\
 12 - 4 - 4 - 4 = 0 & 12 - 5 - 5 = 2 \\
 12 : 4 = 3 & 12 : 5 = 2(2)
 \end{array}$$

**S<sup>t</sup> - N<sup>o</sup> 92, 93, 94 . . . 100**

ԹՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՐ ԿԱՄ ՕՐԻՆԱԿՆԵՐ.

$$\begin{aligned}7 + 3 + 2 - 9 &= \text{e.} \\(3 \times 4) - (12 : 3) + (12 : 4) &= \text{e.} \\(6 \times 2) - (4 \times 2) + (3 \times 2) &= \text{e.} \\(12 - 7) + (12 - 8) + (12 - 9) &= \text{e.} \\(4 \times 3) - (12 : 2) + (12 - 6) &= \text{e.}\end{aligned}$$

Եղեռակ բարձրակարգություն-ընթան.

|                   |                   |                   |
|-------------------|-------------------|-------------------|
| $2 \times 2 = 4$  | $3 \times 3 = 9$  | $4 \times 4 = 16$ |
| $2 \times 3 = 6$  | $3 \times 4 = 12$ | $4 \times 5 = 20$ |
| $2 \times 4 = 8$  | $3 \times 5 = 15$ | $4 \times 6 = 24$ |
| $2 \times 5 = 10$ | $3 \times 6 = 18$ | $4 \times 7 = 28$ |
| $2 \times 6 = 12$ | $3 \times 7 = 21$ | $4 \times 8 = 32$ |
| $2 \times 7 = 14$ | $3 \times 8 = 14$ | $4 \times 9 = 36$ |
| $2 \times 8 = 16$ | $3 \times 9 = 27$ |                   |
| $2 \times 9 = 18$ |                   |                   |
| $5 \times 5 = 25$ | $6 \times 6 = 36$ | $7 \times 7 = 49$ |
| $5 \times 6 = 30$ | $6 \times 7 = 42$ | $7 \times 8 = 56$ |
| $5 \times 7 = 35$ | $6 \times 8 = 48$ | $7 \times 9 = 63$ |
| $5 \times 8 = 40$ | $6 \times 9 = 54$ |                   |
| $5 \times 9 = 45$ |                   |                   |
| $8 \times 8 = 64$ | $9 \times 9 = 81$ |                   |
| $8 \times 9 = 72$ |                   |                   |

Պի-թափոբեան ապեսակ բարձրակարգություն-ընթան.

|   |    |    |    |    |    |    |    |    |
|---|----|----|----|----|----|----|----|----|
| 1 | 2  | 3  | 4  | 5  | 6  | 7  | 8  | 9  |
| 2 | 4  | 6  | 8  | 10 | 12 | 14 | 16 | 18 |
| 3 | 6  | 9  | 12 | 15 | 18 | 21 | 24 | 27 |
| 4 | 8  | 12 | 16 | 20 | 24 | 28 | 32 | 36 |
| 5 | 10 | 15 | 20 | 25 | 30 | 35 | 40 | 45 |
| 6 | 12 | 18 | 24 | 30 | 36 | 42 | 48 | 54 |
| 7 | 14 | 21 | 28 | 35 | 42 | 49 | 56 | 63 |
| 8 | 16 | 24 | 32 | 40 | 48 | 56 | 64 | 72 |
| 9 | 18 | 27 | 36 | 45 | 54 | 63 | 72 | 81 |

Յացակ սպասարկություն-ընթան.

1) ԵՐԿԱՐՈՒԹԵԱՆ 2 Ա.ՓԵՐ.

|                         |                             |
|-------------------------|-----------------------------|
| 1 Մշոնը կը սպարունակէ = | 7 վերստ :                   |
| " վերստ (փարսակ)        | = 500 ձողաչափ.              |
| " ձողաչափ "             | = 3 կանգուն.                |
| " կանգունը "            | = 4 քառորդ կամ 16 վերլուկ : |
| " ձողաչափ "             | = 7 սոնաչափ :               |
| " սոնաչափ "             | = 12 բթաչափ :               |
| " բթաչափ "              | = 10 գծաչափ :               |

2) ՄԵԿ ԵՐԵՒՆԻՔԻ 2 Ա.ՓԵՐ.

|                                                                       |  |
|-----------------------------------------------------------------------|--|
| 1 քառակուսի մշոնը ունի 49 քառ. վերստ ( $7 \times 7 = 49$ ):           |  |
| " " վերստ ", 250,000 ", ձողաչափ (500 $\times$ 500):                   |  |
| " " ձողաչափ ", 9 ", կանգուն ( $3 \times 3 = 9$ ):                     |  |
| " " կանգունը (*) ", 256 ", վերլուկ ( $16 \times 16$ ):                |  |
| " " ձողաչափ ", 49 ", սոնաչափ ( $7 \times 7$ ):                        |  |
| " " սոնաչափ ", 144 ", բթաչափ ( $12 \times 12$ ):                      |  |
| " " բթաչափ ", 100 ", գծաչափ ( $10 \times 10$ ):                       |  |
| " բրածորը = $60 \times 40 = 80 \times 30 = 2,400$ քառակուսի ձողաչափ : |  |

3) ՄԵՐՄԱՆ 3 ԴԱՏԱԼԻ 2 Ա.ՓԵՐԸ.

|                                                                                   |  |
|-----------------------------------------------------------------------------------|--|
| 1 խորանարդեան ձողաչափ ունի 27 խորանարդեան կանգուն ( $3 \times 3 \times 3 = 27$ ): |  |
| " " կանգունը ", 4,096 ", " վերլուկ ( $16 \times 16 \times 16 = 4,096$ ):          |  |
| " " ձողաչափը ", 343 ", " սոնաչափ ( $7 \times 7 \times 7 = 343$ ):                 |  |
| " " սոնաչափը ", 1,728 ", " բթաչափ ( $12 \times 12 \times 12 = 1,728$ ):           |  |
| " " բթաչափը ", 1,000 ", " գծաչափ ( $10 \times 10 \times 10 = 1,000$ ):            |  |

4) ՀԵՂՈՒԿ ՄԵՐՄԱՆ 8 2 Ա.ՓԵՐԸ.

|                                     |  |
|-------------------------------------|--|
| 1 Տակառը ունի 40 վերստ (771).       |  |
| " վերստ ", 10 շաօփ :                |  |
| " շաօփը ", 2 կիսաշաօփ կամ կրուժկա : |  |

5) ՀԵՂՈՒԿ 8 Ա.ՓԵՐԸ.

|                                               |                                 |
|-----------------------------------------------|---------------------------------|
| 1 Լասորը կը սպարունակէ 12 չետովերտ կամ խաիր : |                                 |
| " շետվերտ ", " 8 շետվերիկ :                   |                                 |
| " չետվերիկ ", " 8 գարնեց :                    |                                 |
| միլիոն                                        |                                 |
| երես                                          |                                 |
| գարիպ                                         | (*) կանգուն յօկոտ. գալ՝ արշինъ. |

## 6) ԱՌԵՒՏՈՎԱԿԱՆ ԿՇԵՐՆԵՐԸ.

- 1 բերկավեցը ունի 10 փութ։  
 „ փութը „ 40 փութ։  
 „ փութը „ 32 լուս կամ 96 զօլոտնիկ։  
 „ լուս „ 3 զօլոտնիկ։  
 „ զօլոտնիկը „ 96 մաս (դոլի)։

## 7) ՏԵՂԱՎԱՃԱՌԱԿԱՆ ԿՇԵՐՆԵՐԸ.

- 1 ֆութը ունի 12 ունկի (համարեած 84 զօլոտնիկ)։  
 „ ունկին „ 8 դրամ։  
 „ դրամը „ 3 սկրուպուլ։  
 „ սկրուպուլ „ 20 գուգակ (դարեհատ)։

## (8) ԴՐԱՄՆԵՐԸ.

- 1 խմակերեալը ունի 10 մանէթ Յ0 կոպ. (ոսկի)։  
 „ կես խմակերեալը „ 5 „ 15 „  
